

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՍԱՐԻՔԵԿՅԱՆ ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻՔԵԿԻ

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՍԵՂՄԱԳԻՐ

**Ը. 00.02 «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի
գիտական աստիճանի հայցման համար**

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

տնտեսագիտության դոկտոր,
Յեղիմե Գրիգորի Մանասյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013.թ. հունիսի 2-ին ժամը 13.30-ին Երևանի
պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում գործող ՀՀ ԲՈՂ-ի
015 մասնագիտացված խորհրդի նիստում:

Հասցեն 0009, ք. Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013. թվականի մայիսի 31-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Ա.Յ. Առաքելյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության արդիականությունն ու հրատապությունը. Մարդկային հասարակության զարգացման ճանապարհը նույնաման է համարյա բոլոր երկրներում: Տարբեր են լինում զարգացման պայմանները և, որպես հետևանք՝ արդյունքները, ինչն էլ հենց պայմանավորում է անհավասար զարգացած արդի աշխարհը: Հայաստանն այդ առումով հայտնվել է այնպիսի անցումային իրավիճակում, երբ վերափոխումների շարունակական գործընթացն ուղեկցվում է դանդաղ հասարակական-տնտեսական տեղաշարժերով: Խնդիրն էլ ավելի է բարդացել հետճգնաժամային արդի զարգացումների պայմաններում: Այսօր օրակարգային է դարձել երկրի հասարակական-տնտեսական որակական վերակառուցման անհրաժեշտությունը: Այստեղ հավասարապես կարևորվում են թե՛ ազգի ինքնակազմակերպման ունակությունների ու հասարակական-տնտեսական ներուժի բացահայտման և դրանց առավել ամբողջական օգտագործման, թե՛ զարգացման գերակայությունների ճիշտ որոշման և համապատասխան տնտեսական մեխանիզմների կիրառման հարցերը: Պայմանավորված կոնկրետ իրավիճակով ու ազգային առանձնահատկություններով, շատ կարևոր է, որ դրանք բխեն հասարակական-տնտեսական զարգացման ազգային այլընտրանքներից և հանդես գան հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտների փոխկապակցվածության և փոխհարաբերությունների օրգանական միասնության մեջ: Նման մոտեցումը հնարավորություն կտա ձևավորել Հայաստանի զարգացման ցանկալի հեռանկարին միտված հայեցակարգային այնպիսի ուղղություններ, որոնք կկանխորոշեն ազգային համակարգի տեղը՝ մարդկային զարգացման ընդհանուր գործընթացում: Մոտեցումների տրամաբանական այս ամբողջությունն էլ հենց պայմանավորում է ներկայացված հետազոտության **արդիականությունը**: Հետանցումային, առավել ևս հետճգնաժամային արդի պայմաններում, առաջ շարժվելու ճանապարհը հիմնախնդիրների առավելագույնս օբյեկտիվ վերհանումը, դրանց պատճառահետևանքային կապերի բազմակողմանի վերլուծությունն ու ախտորոշումը, ինչպես նաև համապատասխան մոտեցումների և լուծումների մշակումն ու կիրառությունն է: Դա ենթադրում է անելիքների և հնարավորությունների բացահայտում, մշակվող մոտեցումների առավել արդյունավետ իրագործում, ինչը հասկանալի է, երկարատև գործընթաց կլինի: Այս տեսակետից առանձնապես կարևորվում է մեր երկրի առջև ծառայած խնդիրների հաղթահարման հրատապության գիտակցումը: Եթե չչտապենք, ուղղակի դուրս կմնանք աշխարհում տեղի ունցող գլոբալ և սրընթաց գործընթացներից: Մինչդեռ այսօր առավել, քան երբևէ, ճգնաժամը մեր առջև բացել է նաև առաջընթացի լուրջ հնարավորություններ: Եվ այս տեսակետից ատենախոսության ընտրված թեմաի հետազոտությունն, իսկապես, **հրատապ է**:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Հետազոտության **նպատակն է վեր հանել հասարակական-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և որոշել Հայաստանի Հանրապետության զարգացման երկարաժամկետ տնտեսական քաղաքականության հայեցակարգային դրույթներն ու մոտեցումները**:

Առաջադրված նպատակների իրատեսական լուծումների համար կատարված հետազոտություններն ուղղվել են հետևյալ **խնդիրների** լուծմանը.

- իրականացնել անցումային երկրների, մասնավորապես Հայաստանի Հանրապետության հետանցումային զարգացման բազմակողմանի վերլուծություն և բացահայտել դրա պատճառահետևանքային կապերը

- ուսումնասիրել նախաճգնաժամային և հետճգնաժամային արդի գարգացումները՝ շեշտը դնելով անցումային երկրներում, մասնավորապես Հայաստանում, այդ գարգացումներին առընչվող հարցերի վրա

- հիմնավորել հասարակական-տնտեսական զարգացման խնդիրների հաղթահարման հիմնադրույթները, չափորոշիչներն ու մոտեցումները՝ դրանք բխեցնելով հասարակական-տնտեսական արդիականացման նոր փուլի ելքային պայմաններից

- հստակեցնել հասարակական-տնտեսական զարգացման արդի պայմաններում առաջ շարժվելու ուղիներն՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ազգի ինքնակազմակերպման ունակությունների ու հասարակական-տնտեսական ներուժի առավելագույնս բացահայտման և դրանց առավել ամբողջական օգտագործման, զարգացման գերակայությունների ճիշտ որոշման և համապատասխան տնտեսական մեխանիզմների կիրառման հարցերին

- զնահատել ազգային ներդրումային ներուժի բաղադրիչների քանակական ու որակական առանձնահատկությունները, և առավելագույնս բացահայտել այդ ներուժը՝ որպես տնտեսության արդիականացման և առաջընթաց զարգացման հնարավորությունների հիմնարար հենք

- որոշել Հայաստանի Հանրապետության հասարակական-տնտեսական ներուժի ազգային առաջնահերթությունները և երկրի զարգացման մեջ դրանցից յուրաքանչյուրի հնարավոր ազդեցության չափը՝ որպես ազգային ամբողջական ներուժի արդյունավետ իրագործման հենք

- հստակեցնել Հայաստանի Հանրապետության հասարակական-տնտեսական զարգացման նոր գաղափարախոսական հենքը և որոշել երկարաժամկետ տնտեսական քաղաքականության համարժեք մոտեցումներն՝ ուշադրություն դարձնելով հասարակական-տնտեսական զարգացման տրամաֆորմացիոն խնդիրներին՝ սկսած ազգային գաղափարախոսական ու արժեհամակարգային խնդիրներից մինչև քաղաքականը, սոցիալականը ու տնտեսականը

- հիմնավորել կառավարման ազգային հայեցակարգային մոտեցումների մշակման և կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը և տալ դրանց իրագործման հիմնարար սկզբունքները, մեխանիզմներն ու մոտեցումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան. Հետազոտության օբյեկտ է հանդիսացել երկրի հասարակական-տնտեսական համակարգն՝ իր հետանցումային զարգացումներով, իսկ առարկան է՝ հասարակական-տնտեսական ներուժն, իր մշակույթ, գիտելիք, մարդկային կապիտալ, ինստիտուցիոնալ հենք, ենթակառուցվածքներ, ֆինանսական և բնական ռեսուրսներ բաղադրիչներով:

Հետազոտության տեսական-տեղեկատվական և գիտամեթոդական հիմքերը. Աշխատանքի տեսական ու գիտամեթոդական աղբյուր են հանդիսացել հեղինակավոր տնտեսագետների, սոցիոլոգների, քաղաքագետների, իրավասու հեղինակավոր կառույցների սույն հիմնախնդիրներին առնչվող հետազոտությունները: Մասնավորապես ուսումնասիրվել են Մ. Քեյնսի, Ա. Թոմսոնի, Ֆ. Հայեկի, Յ. Շումպետերի, Վ. Ռոսթոլի, Ջ. Սորոսի, Պ. Կրուգմանի, Մ. Պորտերի, Պ. Դրուկերի, Չ. Հենդիի, Ռ., Լ. Աբալկինի, Վ. Պոպովի, Ա. Աղամբեկյանի և այլոց գիտական ժառանգությունը: Հիմնախնդրի բազմակողմանի հետազոտվածությամբ և լուծումների առաջադրմամբ իրենց կարևոր ավանդն են ներդրել Բ. Եղիազարյանը, Յ. Սարգսյանը, Ա. Մարկոսյանը, Վ. Բոստանջյանը, Ս. Դավոյանը, Յ. Աղաջանյանը, Մ. Քոթանյանը, Յ. Բագրատյանը, Է. Հարությունյանը և շատ այլ

երախտավորներ: Յետագոտության ընթացքում օգտագործվել են նաև Յամաչխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Գլոբալ մրցունակության համաժողովի սույն հիմնախնդրի և ԴԴ-ի վերաբերյալ գիտամեթոդական, խորհրդատվական, վերլուծական նյութերը, նորմատիվ ակտերը, պաշտոնական նյութերն ու վիճակագրական տվյալները և այլն:

Ուսումնասիրության ժամանակ կիրառվել են գործոնային, համեմատական ու այլ վերլուծությունների, վիճակագրական խմբավորումներով մեթոդներ և այլն:

Աշխատանքի հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը. Աշխատանքում առաջարկվում է զարգացման հայեցակարգային փոփոխություններն որպես հիմք ընդունելով հասարակական-տնտեսական երկարաժամկետ զարգացման քաղաքականության նոր շեշտադրումներ և նոր գերակայություններ: Ըստ այդմ, աշխատանքի հիմնական գիտական նորույթներն են.

1. Յաշվի առնելով, որ տնտեսական աճն անցումային երկրներում, այդ թվում Յայաստանում ուներ վերականգնողական բովանդակություն և կրում էր էքստենսիվ բնույթ՝ չնպաստելով հասարակական-տնտեսական զարգացմանը, ինչպես նաև ճգնաժամով պայմանավորված մարտահրավերներն ընդունելով որպես բացառիկ հնարավորություն՝ նոր ելքային պայմաններից բխող որակապես նոր վերելքի ու առաջընթացի համար, հիմնավորվել է *որակական նոր տնտեսական աճի անցնելու անհրաժեշտությունը*՝ ուղղված հասարակական-տնտեսական այնպիսի վերափոխումների, որոնք կապահովեն տնտեսության առաջընթաց զարգացում և կյանքի որակի ու կենսամակարդակի բարձրացում:

2. Գիմք ընդունելով, որ արդի հասարակական-տնտեսական արդի զարգացումները հանգեցրել է նոր մոտեցումների ու նոր ռեսուրսային ներուժի վրա հիմնված՝ զարգացման նոր հետագիծ տեղափոխման անհրաժեշտությունը, հաշվի առնելով ազգային ներուժի առաջնահերթությունների և հասարակական-տնտեսական զարգացման վրա դրանց ազդեցության վերաբերյալ գնահատականները՝

-հստակեցվել են երկարաժամկետ տնտեսական քաղաքականության գերակայությունները՝ հիմնված *մարդկային կապիտալի, գիտելիքի և մշակույթի ոլորտների զարգացման վրա, որի պայմաններում մարդու, հետևաբար, հասարակության հոգևոր-մշակութային ու մտավոր զարգացումը դառնում է հասարակական-տնտեսական զարգացման առանցքը,*

-հիմնավորվել է, *հավաքական մշակութային* առանձնահատուկ դերն իր նեղ իմաստով՝ որպես ուղղակի ազգային մշակույթ, և՛ լայն իմաստով՝ որպես զուտ մտածողական, կրթական, կազմակերպչական, մշակույթ, որտեղ *հիմնական գաղափարն այն է*, որ զարգացման առանցքային ազդակները ծագելով մարդկային մշակույթում, երկարաժամկետ հատվածում ենթարկվելով փոփոխության՝ համապատասխանաբար ազդում են ազգային մտածելակերպի վրա, ինչն էլ, ի վերջո, վերաձևավորում է հասարակական-տնտեսական համակարգը,

-շեշտադրելով, որ նման մոտեցման առանձնահատկությունը անհատի հոգևոր-մշակութային հատկանիշների ընդլայնված վերարտադրությունն է՝ ուղղորդված գիտելիքի վրա հիմնված որակական զարգացումով, հիմնավորվել է հասարակական-տնտեսական զարգացման արժեքային նոր պարբերաշրջանի անցման անհրաժեշտությունը, որտեղ *արտատնտեսական՝ հոգևոր՝ կրթա-մշակութային գործոնները պետք է առաջնային լինեն տնտեսական գործոնների նկատմամբ:*

3. Հիմնավորվել է *պետության և հասարակության դերի* կարևորությունը, ինչպես նաև պետություն-հասարակություն արդյունավետ համագործակցությունը՝ որպես զարգացման ռազմավարության պարտադիր նախապայման:

4. Հիմքն ընդունելով, որ հասարակական-տնտեսական փոփոխությունների դինամիկ զարգացման արդի պայմաններում առաջնահերթ կարևորություն է ձեռք բերում *կառավարման ազգային հայեցակարգի* մշակման և ներդրման խնդիրը, հաշվի առնելով, որ կառավարման համակարգը պետք է բխի հասարակական-տնտեսական զարգացման արդի խնդիրներից և համահունչ լինի այդ զարգացումներին, հիմնավորվել է, որ Հայաստանի *կառավարման ազգային հայեցակարգը պետք է լինի սոցիալ-մշակութային, որտեղ որպես զարգացման օբյեկտ և, միաժամանակ, դրա իրագործող հանդես է գալիս մարդն՝ իր մտածելու կարողությամբ ու կրթվածությամբ, որպես շարժիչ ուժ՝ գիտելիքի անընդհատ զարգացումը:*

5. Հիմնավորելով, որ հասարակական-տնտեսական արդի զարգացումներն անհրաժեշտություն են առաջացրել հստակեցնելու կառուցվածքային վերափոխումների ռազմավարական ուղեցիկներն ու գերակայությունները, հաշվի առնելով, որ երկարաժամկետ հատվածում հասարակական-տնտեսական համակարգի կայունությունը որոշվում է *հասարակության ինքնակազմակերպման մակարդակով և այն ապահովող կառույցների աճող դերով*, առաջարկվել է ձևավորել հետևյալ կառուցվածքային ենթահամակարգերը, մասնավորապես.

-հոգևոր-մշակութային զարգացման ենթահամակարգ՝ ուղղված ազգային մտածողության ու ինքնանույնականացման ձևավորմանը, համամարդկային քաղաքակրթության մեջ մեր ժողովրդի դերի գիտակցմանը

-հասարակական փոփոխման մեթոդների և հասարակություն-պետություն համագործակցության ապահովման ենթահամակարգ, ինչն առավել ցայտուն է դրսևորվում կառավարման սոցիալ-մշակութային սկզբունքի ներքո

-հասարակական-տնտեսական ռազմավարական զարգացման ենթահամակարգ՝ պայմանավորված ռազմավարական ու ընթացիկ կառավարման մակարդակների հստակ տարանջատման անհրաժեշտությամբ, որպես հայեցակարգային մոտեցում՝ երկարաժամկետ զարգացման հիմքում դիտարկելով մարդկային կապիտալը, մշակույթը և գիտելիքը:

Ատենախոսության գիտա-գործնական նշանակությունը և հիմնական արդյունքների ներդրումը. Ատենախոսության գիտական և գործնական արդյունքների օգտագործումը կարող է նպաստել ՀՀ հասարակական-տնտեսական զարգացման ավելի ընդգրկուն քաղաքականության մշակմանը և այդ քաղաքականությունն իրականացնող կառույցների արդյունավետության բարձրացմանը:

Աշխատանքում ներկայացված առաջարկությունները և արծարծված որոշ խնդիրների լուծումները քննարկվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության «ՀՀ մարզերի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման հայեցակարգը» փաստաթղթի շրջանակներում և հաշվի են առնվել ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի շրջանակներում:

Հասարակական-տնտեսական զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտության արդյունքները, 2000 թվականից, հեղինակի կողմից գեկուցվել են միջազգային և հանրապետական գիտագործնական համաժողովներում և հրատարակվել են ՀՀ և այլ երկրների /Շվեդիա, Ռուսաստան/ գիտական և այլ պարբերականներում՝ 24 հոդվածների և մեկագրությունների տեսքով:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը. Բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, օգտագործված 228 անուն գրականության ցանկից, ծավալը՝ 278 էջ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածականում հիմնավորվել են ընտրված թեմայի արդիականությունը, նպատակները և դրանց հաղթահարման խնդիրներն ու լուծումները: Ներկայացվել են հետազոտության առարկան, գիտա-մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները, գիտական նորույթն ու գործնական ներդրումը: Հասարակական-տնտեսական զարգացման պատճառահետևանքային կապերի բացահայտումը ենթադրում է դրանց խորքային վերլուծություն: Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական զարգացման առանձնահատկությունները և արդի խնդիրները անցումային տնտեսությամբ երկրներում» գլխում ուսումնասիրվել են արդի գլոբալ զարգացումների ներքո անցումային երկրներում տեղի ունեցող գործընթացները: Հասարակական-տնտեսական զարգացումների վերլուծության միջոցով փորձ է արվել բացահայտել անցումային տնտեսությունների զարգացման պատճառահետևանքային կապերը: Մանրամասնորեն նկարագրվել է անցումային երկրների, այդ թվում Հայաստանի Հանրապետության, տնտեսական զարգացումներում տեղ գտած ընդհանրությունները և առանձնահատկությունները, բացահայտվել են ճգնաժամային նախադրյալները: Տնտեսական աճն անցումային երկրներում, այդ թվում Հայաստանում ուներ առանձնահատուկ բովանդակություն /տես աղյուսակը/:

Աղյուսակ 1

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) տարեկան աճի տեմպը (%-ներով)¹

Երկիր/ Տարի	1992	1995	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Հայաստան	58.2	106.9	105.9	109.6	113.2	114.0	110.5	113.9	113.2	113.8	106.8
Արդրեզան	77.4	88.2	111.1	109.9	110.6	111.2	110.2	126.4	134.5	125.0	110.8
Վրաստան	55.1	102.6	101.8	104.8	105.5	111.1	105.9	109.6	109.4	112.4	102.1
Բելառուս	90.4	89.6	105.8	104.7	105.0	107.0	111.4	109.4	110.0	108.2	110.0
Ղազախստ.	94.7	91.8	109.8	113.5	109.8	109.3	109.6	109.7	110.7	108.9	103.3
Ղրղզստան	86.1	94.6	105.4	105.3	100.0	107.0	107.1	99.4	102.7	108.2	107.6
Սլովակ	71.0	98.6	102.1	106.1	107.8	106.6	107.3	107.1	104.0	103.0	107.2
ՌԴ	85.5	95.9	110.0	105.1	104.7	107.3	107.2	106.4	107.7	108.1	105.6
Տաջիկստան	70.0	87.6	108.3	110.2	110.8	111.0	110.6	106.7	107.0	107.8	107.9
Ուկրաինա	90.1	87.8	105.9	109.2	105.2	109.6	112.1	102.4	107.0	107.3	102.1
Թեյխա	-	112.5	103.6	102.5	101.9	103.6	104.5	106.3	106.8	106.0	103.3
Խորվաթիա	88.3	101.7	102.9	104.4	105.6	105.3	104.3	104.3	104.7	105.5	102.4
Լիտվա	67.9	100.5	106.9	108.1	106.5	107.2	108.7	110.6	112.2	110.0	95.5
Լատվիա	78.7	103.3	104.2	106.7	106.9	110.2	107.3	107.8	107.8	108.9	103.0
Եստոնիա	-	105.0	109.6	107.7	107.8	107.1	107.5	109.2	110.4	106.3	96.4
Սլովենիա	94.5	104.1	104.4	102.9	104.0	102.8	104.3	104.4	105.9	106.8	103.5
Սլովակիա	-	107.5	101.4	103.4	104.8	104.7	105.2	106.5	108.5	110.4	106.4
Լեհաստան	103	117.1	104.3	101.2	101.4	103.9	105.3	103.6	106.2	106.6	104.9
Ռումինիա	91.3	107.1	102.1	105.8	105.2	105.2	108.4	104.1	107.6	106.3	107.3
Հունգարիա	96.9	101.5	105.2	104.1	104.1	104.2	104.8	104.0	104.1	101.1	100.5
Բուլղարիա	92.8	102.9	105.4	104.1	104.9	105.0	106.6	106.3	106.3	106.2	106.0

Գիտարկված երկրները շուկային անցման սկզբնական շրջանում արժանագրելով տնտեսության կտրուկ անկում՝ մոտ 30%², այնուհետև՝ սկսած 2000 թվականից

¹.EBRD-Transition Economy, 2006, 2007 2008.

².EBRD-Transition Economy, 2008, p.12.

ունեցան արագացող աճ, ինչը շարունակվեց այնքան ժամանակ, քանի դեռ չէր վերականգնվել նախաանցումային մակարդակը: Այսինքն, այդ աճն ուներ վերականգնողական բովանդակություն և, չնայած այն իր մեջ պարունակում էր լուրջ որակական դրսևորումներ, այնուամենայնիվ կրում էր քանակական բնույթ և չէր նպաստում հասարակական-տնտեսական զարգացմանը: Այլևս հրատապ էր դարձել *որակապես նոր տնտեսական աճ ապահովելու խնդիրը*:

Շուկայական հարաբերություններին անցման բարդ գործընթացների և միջազգային շուկային ոչ լիարժեք ինտեգրվածության պայմաններում, բուռն գլոբալ գործընթացների ներքո էլ ավելի էր խորացել զարգացող երկրների կախվածությունը զարգացած երկրներից: Զարգացած երկրները, որտեղ բնակվում է աշխարհի բնակչության 15.6 %-ը, ապահովում են ՀՆԱ-ի 47%-ը և միջազգային առևտրի մոտ 50%-ը³: Ստեղծված իրավիճակն էլ ավելի բարդացավ՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, ինչը հիմնականում պայմանավորված է համաշխարհային արդի զարգացումներով, ինչպես նաև կոնկրետ երկրներում իրականացվող բարեփոխումների բնույթով և ընթացքով և, ըստ էության, արդյունք է նորազատական /ճեղիքերալ/ բուռն գլոբալ զարգացումների: Ընդհանրապես, տնտեսության աննախադեպ գլոբալացումը, ենթադրում է շուկաների գլոբալ պատասխանատվություն: Մինչդեռ, ամբողջ աշխարհում իրական տնտեսությունն ապակենտրոնացված էր, իսկ ֆինանսական շուկաները, ընդհակառակը, դարձել էին խիստ կենտրոնացված և չվերահսկվող: Արդյունքում, ֆինանսական հատվածն անշեղորեն գերազանցելով իրական հատվածին՝ հանգեցրել է դրանց անհավասարակշռության՝ դառնալով, իր բնույթով աննախադեպ, համընդգրկուն, լայնածավալ և սրընթաց ճգնաժամի պատճառ /տե՛ս 16, 21, 25, 32, 43, 46, 54, 62, 64, 66, 79, 80, 82, 97, 115, 131, 209/:

Ճգնաժամերով պայմանավորված մարտահրավերները բացառիկ հնարավորություն են՝ նոր ելքային պայմաններից բխող որակապես նոր վերելքի ու առաջընթացի: Այս տեսակետից շատ կարևոր է, թե յուրաքանչյուր երկիր կոնկրետ իրավիճակում ի՞նչ համեմատական առավելություններ կբացահայտի իր հետագա զարգացման ճանապարհին և որքանով արդյունավետ դրանք կօգտագործի, և որքանով արագ ու քիչ կորուստներով դուրս կգա ստեղծված իրավիճակից:


Ընդունելով, որ չկան միասնական ղեկատուներ ու տեխնոլոգիաներ՝ հետճգնաժամային զարգացումների խնդիրների հաղթահարման ճանապարհին, աշխատանքում բազմակողմանիորեն հիմնավորվում է այն մոտեցումը, որ յուրաքանչյուր երկիր դրանք պետք է լուծի յուրովի: Նման իրավիճակը հանգեցրել է երկրի զարգացման նոր ուղիների որոնումների անհրաժեշտության գիտակցմանը, այնպիսի ուղիների, որոնք կնպաստեին տնտեսության արդիականացմանը և այն բնականոն զարգացման հետագիծ տեղափոխմանը: Այստեղ առանձնապես կարևորվում են *հետճգնաժամային զարգացումներից բխող հասարակական-տնտեսական զարգացման նպատակային քաղաքականության ու ճիշտ գերակայությունների որոշման, ինչպես նաև բարեփոխումների նոր որակական մակարդակի ապահովման ու համարժեք մոտեցումների մշակման և, հետևաբար, որակապես նոր տնտեսական համակարգին անցման խնդիրները*: Լուրջ ուշադրության է արժանացել ազգային արժեքային համակարգի վերափմաստավորման, ազգային ու ավանդական արժեքների վրա հիմնված ժամանակակից արժեհամակարգի ձևավորման հարցերի հետազոտությունը:

³ *TheGlobal Competitiveness Report, 2008-2009, World Economic Forum, Geneva, 2008, p. 359.*

Բարեփոխումներով պայմանավորված արդյունքները և դրանց տարաբնույթ դրսևորումներն ունեն ինչպես ընդհանրություններ՝ բնորոշ բոլոր երկրներին, այնպես էլ առանձնահատկություններ՝ պայմանավորված կոնկրետ երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային առանձնահատկություններով: Կրթահին մատուցելով մեր երկրի հասարակական-տնտեսական զարգացումներին, կարելի է ասել, որ այսօր երկրում անելիքները դեռևս շատ են՝ սկսած կայուն տնտեսական աճի ապահովումից մինչև որակ ու կենսամակարդակի աճ ապահովող զարգացում: Սա ենթադրում է անցում որակապես նոր տնտեսական աճի և, բնականաբար, բարեփոխումների նոր որակական մակարդակի, ինչի նպատակային իրագործումը ենթադրում է. *անելիքների ու հնարավորությունների առավելագույնս բացահայտում* → *տնտեսական զարգացման գերակայությունների սահմանում* → *դրանից բխող նպատակների որոշում* → *լուծման արդյունավետ ուղիների մշակում և լավագույն այլընտրանքի որոշում* → *դրանց հետևողական իրականացում* /տես գծապատկերը/:

Գծապատկեր 1

Հասարակական-տնտեսական զարգացման լավագույն այլընտրանքի որոշման կրամաբանությունը



Նման մոտեցումը հնարավորություն կտա անընդհատ կատարելագործել տնտեսական զարգացման ռազմավարությունը: Այստեղ կարևոր խնդիր է դառնում երկրի զարգացման ելակետի ճիշտ որոշման հարցը, քանի որ վատ արդյունքները հիմնականում լինում են սխալ ընտրված ելակետի արդյունք: Ընդ որում, որպեսզի դրված հարցերի լուծումները լինեն առավել արդյունավետ, անհրաժեշտ է

զարգացման յուրաքանչյուր նոր փուլի համար նոր ելքային պայմանների հստակեցում: Այսպիսով, նոր ելքային պայմանները՝ դառնալով նոր հասարակական-տնտեսական համակարգի մուտք և դրվելով ռազմավարական նախագծային որոշման հիմքում՝ կարող են մեծապես կանխորոշել առաջընթացի բնույթը: Հետճգնաժամային արդի փուլը դիտարկելով որպես զարգացման նոր սկիզբ՝ նոր մոտեցում պահանջող խնդիրները նույնպես շատ են: Սա, առաջին հերթին, պահանջում է նոր մտածողություն, ինչն էլ իր հերթին ենթադրում է ազգային արժեքային համակարգի վերահիմաստավորում ու արդիականացում, ազգային ու ավանդական արժեքների /ընտանիք, եկեղեցի, պետություն/ վրա հիմնված ժամանակակից արժեհամակարգի ձևավորում: Այս տեսակետից շատ կարևոր է բացահայտել. ի՞նչ արժեքների շուրջ պետք է ձևավորվեն հասարակական հարաբերությունները և ո՞րն է հասարակության դերը երկրի առաջընթացի ճանապարհին, ի՞նչ գաղափարախոսություն է գերիշխում հասարակական-տնտեսական հարաբերություններում և որո՞նք են տնտեսագիտական նոր մտածողության առանձնահատկությունները, որո՞նք են զարգացման գերակայությունները և տնտեսական զարգացման նոր հետագծի անցնելու ուղիները և մոտեցումները:

Հաշվի առնելով, որ ցանկացած տնտեսական համակարգի նպատակային զարգացում, առաջին հերթին, ենթադրում է հասարակական-տնտեսական գերակայությունների սահմանում, կարելի է ասել, որ գերակայությունների ընտրությունը և/կամ նրանց փոփոխումն անմիջականորեն ածանցյալ են երկրում իշխող գաղափարախոսական հենքից և դրանցից բխող համակարգային փոփոխություններից: Ջարգացման տարբեր փուլերում գերակայությունները կարող են շատ տարբեր լինել: Ընդ որում, ցանկացած կոնկրետ իրավիճակում կարող են գործել մի քանի գերակայություններ: Կարող են լինել իրավիճակներ, որոնք կստիպեն վերանայել սահմանված գերակայությունները կամ հրաժարվել դրանցից, կամ էլ, ընդհակառակը՝ արագացնել դրանց իրագործումը: Բոլոր դեպքերում գերակայությունները պետք է ուղղված լինեն մի կողմից՝ ընդհանուր համակարգային երևույթներին և գլոբալ շուկայական գործընթացներին, մյուս կողմից՝ իրավիճակային կոնկրետ խնդիրներին, որտեղ ազգային խնդիրները պետք է գերակա լինեն համընդհանուր խնդիրներից:

Այստեղ առանձնապես կարևորվում է պետության կարագավորիչ դերը, ինչով էլ պայմանաված աշխատանքում փորձ է արվել հստակեցնել պետություն-հասարակություն, պետություն-տնտեսություն հարաբերությունները, ինչպես նաև որոշակիացնել պետական միջամտության անհրաժեշտության և ցանկալի, ընդունելի կամ թույլատրելի սահմանի, պետական միջամտության կիրառման ոլորտների, դրա տեսակների, ձևերի ու մեթոդների վերաբերյալ հարցերը **/գլուխ 2/:** *Պետության դերի, նրա ազդեցության ու պետական աջակցության շուրջ հարցերը* վիճելի են եղել հենց պետության ստեղծման պահից: Հասարակական-տնտեսական զարգացումների ամբողջ ընթացքում, կախված տնտեսական զարգացման իրավիճակներից, պետության և շուկայի դերի վերաբերյալ գերիշխող մոտեցումներն անընդհատ փոխարինել են միմյանց՝ համապատասխանաբար փոխելով զարգացման ռազմավարությունները: Ավելին, պետության ու շուկայի հաջորդական փոփոխությունները տեղի չեն ունեցել որպես զուտ տատանումներ երկու գաղափարախոսությունների միջև, այլ ամեն անգամ անցումը հակադիր հայեցակարգին ուղեկցվել է լուրջ որակական փոփոխություններով՝ պայմանավորված նյութական կամ ֆիզիկական մակարդակում հին մոտեցումների

աստիճանական քայլքայմամբ և նոր մոտեցումների անհրաժեշտությամբ: Ասվածը հիմք է տալիս խոսելու պարուրածն զարգացման մասին, որի ժամանակ յուրաքանչյուր նոր պարույր բերում է տնտեսության արդիականացման և զարգացման նոր որակական մակարդակ, ինչն էլ հենց պայմանավորում է պետության դերի վերաիմաստավորման տրամաբանությունը: Այսպիսով, համաշխարհային փորձը վկայում է շուկայական տնտեսության, քաղաքացիական հասարակության ու պետության սերտ փոխկապակցվածության մասին, ինչը տարբեր ժամանակահատվածներում ունեցել է տարբեր դրսևորումներ, որոնք էլ հենց պայմանավորել են պետական միջամտության բնույթն ու բովանդակությունը: Այստեղ խնդիրը ոչ այնքան պետության դերի կարևորության և նրա ազդեցության անհրաժեշտության մասին է, որքան պետության գործառույթների և շուկայական մեխանիզմի արդյունավետ համատեղման ու դրանց ճիշտ հարաբերակցման, ինչպես նաև դրա ձևերին ու գործիքներին, որոնց կոնկրետ լուծումներն անմիջականորեն ածանցյալ է զարգացման այն փուլից, որում գտնվում է տնտեսությունը, և խնդիրների այն գերակայությունից, որոնք առաջադրվում են զարգացման յուրաքանչյուր մակարդակում: Սա նշանակում է, որ պետության դերը և նրա ազդեցության չափն առանձին երկրների համար կարող է տարբեր լինել: Պետության դերը հատկապես մեծ է խորը սոցիալ-տնտեսական ու քաղաքական վերափոխումների, ինչպես նաև հետճգնաժամային զարգացումների պայմաններում, երբ շուկայի ինքնակարգավորման մեխանիզմներն աղճատվում են ու խափանվում, իսկ հասարակական-տնտեսական ամբողջ համակարգում տիրող համատարած անվստահության մթնոլորտում դժվարանում է առկա իրավիճակի ճիշտ գնահատումն ու հետագա զարգացումների կանխատեսումը:

Արդի հետճգնաժամային զարգացումները հանգեցրել են երկրի հետագա զարգացման նոր ուղիների որոնումների անհրաժեշտության գիտակցմանը և այն առաջընթաց զարգացման հետագիծ տեղափոխմանը՝ հիմնված նոր արժեհամակարգի, նոր մոտեցումների ու սկզբունքների, նոր ռեսուրսային ներուժի վրա: Այստեղ կարևորվում է *շուկայի և պետության հավասարակշռված փոխհամագործակցությունը, որտեղ պետական կարգավորումը պետք է դառնա տնտեսական քաղաքականության կարևոր գերակայությունը:*

Ջարգացման նոր որակական հենքի վրա, պետության դերի կարևորման հետ միասին, խիստ արդիական է դառնում նաև *հասարակության դերը*՝ որպես զարգացման ռազմավարության պարտադիր նախապայման: Խնդիրն էլ ավելի է կարևորվում, պայմանավորված այն փաստով, որ հայ հասարակության դիրքը շարունակում է թույլ մնալ երկրի զարգացման հարցերում: Հասարակության դերի մեծացումը հնարավորություն կտա, գնահատելով երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործընթացները և կայացրած որոշումները՝ զբաղեցնել հստակ դիրք երկրում տեղ գտած գործընթացներում և երկխոսության ճանապարհով մասնակցել երկրի կայացման ու զարգացման գործին:

Հայաստանում լայնածավալ աշխատանքներ են իրակացվել *ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության և գործարար ակտիվության խթանման* ուղղությամբ: Տնտեսության, մասնավորապես՝ ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման ու աջակցության հարցն առանձնապես կարևորվում է ճգնաժամային իրավիճակներում, երբ հասարակական-տնտեսական ամբողջ համակարգում սկսվում են լուրջ անորոշություններով ու բարդություններով գործընթացներ: *Պետության կողմից իրականացվող հակաճգնաժամային քաղաքականությունն իրենից ներկայացնում*

է տնտեսության պետական կարգավորման և աջակցության միջոցառումների համալիր՝ ուղղված ինչպես առկա խնդիրների հաղթահարմանը, այնպես էլ տնտեսության իրական հատվածի բնականոն գործունեության վերականգնմանն ու զարգացմանը: Այսինքն հակաճգնաժամային քաղաքականության նպատակն է ոչ միայն նպաստել մակրոտնտեսական և ֆինանսական կայունությանը՝ դիմագրավելով բոլոր այն մարտահրավերները, որոնք բերում է ճգնաժամը, և նվազագույնի հասցնել վերջինիս բացասական հետևանքները Հայաստանի տնտեսության վրա, այլ նաև ստեղծել կայուն զարգացման և որակապես նոր տնտեսության ձևավորման բավարար հիմքեր: Այս տեսակետից, չնայած ճգնաժամի հետևանքների վերացման ուղղությամբ պետության կողմից իրականացվել են զգալի աշխատանքներ, այնուամենայնիվ անելիքները դեռևս շատ են: Մասնավաճող, եթե հաշվի առնենք, որ ճգնաժամը, ստեղծելով բարդություններ, միևնույն ժամանակ էապես ընդլայնում է զարգացման հնարավորությունները՝ բացահայտելով նոր մրցակցային առավելություններ:

Պետության դերի դրսևորման շատ արդիական ձև է *հանրային-մասնավոր համագործակցությունը (ՀՄՀ)*, որպես պետության և մասնավոր հատվածի ինտերտուցիոնալ և կազմակերպական որոշակի միավորում՝ ուղղված հանրային կարևոր նշանակություն ունեցող նախագծերի իրականացմանը: ՀՄՀ շրջանակներում սեփականության իրավունքների տարանջատումը պետության և մասնավոր հատվածների միջև սովորաբար վերաբերում է ոչ թե իրավասությունների ողջ համալիրին, այլ այնպիսի կարևոր իրավասությունների, ինչպիսիք են՝ ակտիվների վերահսկողության նկատմամբ իրավունքը, շահույթ ստանալու իրավունքը, կառավարման իրավունքը, ինչպես նաև՝ համաձայնագրի օբյեկտների կապիտալ արժեքների փոփոխման իրավունքը և այս կամ այն սեփականության փոխանցման իրավունքն այլ անձանց: Պետության և մասնավոր հատվածի միջև սեփականության իրավունքների տարանջատման կիրառումը տարածում ունի այսպես կոչված հանրային ծառայությունների, մասնավորապես՝ ենթակառուցվածքային ոլորտներում: Պետությունը մեծ պատասխանատվություն է կրում հասարակության առաջ՝ հանրային բարիքների անընդհատ մատակարարման համար, ինչով էլ հենց բացատրվում է պետության կողմից մի շարք ոլորտների նկատմամբ պետական սեփականության պահպանումը: Միևնույն ժամանակ, մասնավոր հատվածին բնորոշ է ճկունությունը, ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, հակվածությունը նորամտություններին /ինովացիաներին/ և այլն: Այս երկու սեփականության ձևերի առավելությունների համատեղ կիրառումը կարող է ստեղծել նպաստավոր պայմաններ տնտեսության արդյունավետ գործունեության, ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման և դրանց նպատակային կառավարման համար:

Հայաստանում առկա է ՀՄՀ տարատեսակ ձևերի կիրառման և զարգացման մեծ ներուժ, սակայն դրա փաստացի իրագործման համար անհրաժեշտ իրավաբանորեն ճիշտ սահմանել պետության դերը՝ ոչ միայն որպես գլխավոր կարգավորողի, այլ նաև որպես հանրային շահերի և կարիքների ներկայացուցչի և պաշտպանի, այսինքն՝ այն ամենը, ինչը միջազգային իրավական ավանդույթներում դիտարկվում է որպես *հանրային իրավունք*: Կարևոր է պետության և ձեռներեցության միջև համագործակցության հայկական մոդելի ճիշտ գործարկումը: Ներկայումս Հայաստանում նկատվում է ՀՄՀ հարաբերությունների ձևավորման նեոլիբերալ մոդելների, պետական կապիտալիզմի, ինչպես նաև օլիգարխիկ մոդելների խառնուրդ: *Արդյունավետ*

համագործակցությունն իրատեսական է միայն երկրի հետագա ռազմավարական զարգացման հստակության և կանխատեսելիության պարագայում, առանց որի մասնավոր հատվածից ակնկալիքները չեն կարող մեծ լինել: Հայկական օրենսդրությունն, այդ առումով, կարելի է ասել լիարժեք չէ: ՀՄՀ-ն իրականացվում է կամ վարչական լծակներով, կամ քաղաքացիաիրավական գործառնություններով, ինչն աստիճանաբար կարող է հանգեցնել ՀՄՀ-ի արդյունավետության նվազմանը:

Հայաստանի, ինչպես նաև բոլոր անցումային երկրների համար այսօր առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում *մոբիլիզացիոն տնտեսական քաղաքականության* անցնելու խնդիրը՝ որպես ռեսուրսային հնարավորությունների բացահայտման էական աղբյուր ու հասարակական-տնտեսական ներուժի արդյունավետ իրագործման երաշխիք: Այստեղ կարևոր է հասարակություն-պետություն արդյունավետ համագործակցություն՝ ուղղված համախմբված ազգային շահին, առանց որի մոբիլիզացիոն գործընթացն ուղղակի չի աշխատի: Այս տեսակետից շատ դիպուկ է Ու. Ռոստոմի տնտեսական զարգացման տեսության առաջին հայեցակարգերից մեկը, համաձայն որի, անցումը զարգացման մեկ փուլից մյուսին տեղի է ունենում բնականոն շնորհիվ ազգային ներուժի մոբիլիզացման և կատարելագործման:

Ատենախոսության երրորդ՝ **«Հասարակական-տնտեսական ներուժը առաջընթաց զարգացման հենք. հասարակական-տնտեսական ներուժի իրագործման խնդիրները Հայաստանում»** գլխում *անդրադարձ է կատարվել երկրի ռեսուրսային ապահովվածության և ներդրումային ներուժի ամբողջական օգտագործման խնդիրներին՝ որպես ազգային տնտեսության արդիականացման հիմնարար հենք:* Հասարակական-տնտեսական ներուժի ձևավորմանը կարող են նպաստել ինչպես մարդու հոգևոր կյանքը, ազգի գաղափարախոսական հենքն ու հասարակության ինքնակազմակերպման ունակությունները, այնպես էլ կրթական, ֆինանսական ու բնական ռեսուրսները /տես զծապատկերը/:

Գծապատկեր 2

Հասարակական-տնտեսական ներուժի բաղադրիչները

ՄԱՐԻՏՆՈՒԿՆԵՐ	1. Մշակույթ	Դոմինանտ
	2. Գիտելիք	
	3. Մարդկային կապիտալ	
	4. Ինստիտուցիոնալ հենք	
ՄԱՐԻՏՆՈՒԿՆԵՐ	5. Ենթակառուցվածքային հենք	Դոմինանտ
	6. Ֆինանսական ռեսուրսներ	
	7. Բնական ռեսուրսներ	

Հասարակական-տնտեսական ներուժը ոչ նյութական և նյութական ռեսուրսների ամբողջություն է, ինչը պայմանականորեն ներկայացվել է երկու

խոշոր խմբերի /սոցիալական, ֆիզիկական/ և յոթ ենթախմբերի ձևով, որոնք էլ, իրենց հերթին, բաղդատվում են այլ ենթաբաղադրիչների /տես աղյուսակը/:

Աղյուսակ 2

Ազգային ամբողջական ներուժի բովանդակությունը

Սոցիալական	Մշակույթ	արվեստ	երաժշտություն, կերպարվեստ, ճարտարապետություն, լեզու
		գաղափարախոսություն, նորմեր	կրոն, պատմություն, ընդունելի վարքագիծ, ավանդույթներ և այլն
		ազգային մտածելակերպ	վստահություն, աշխարհաստեղծ վերաբերմունք
	Մարդկային	առողջություն և ազգաբնակչություն	բժշկական և մտածողական առողջություն, ազգաբնակչության կառուցվածք՝ տարիքային, սեռական և այլն
		կրթություն և վերապատրաստում	առաջնային, երկրորդային, տեխնիկական և այլն
		վերաբերմունք և մոտիվացիա	ինքնապատասխանատվություն, կողմնորոշող գործողություն և այլն
	Գիտելիք	որակական, քանակական տվյալներ	վիճակագրություն, կարծիքներ
		հայեցակարգեր, ծրագրեր	տեսություններ, մեթոդներ, գործընթացներ
		կրթական կառույցներ	համալսարաններ, քոլեջներ
	Ինստիտուցիոնալ	առողջ, թափանցիկ կառավարման համակարգ	թափանցիկ, ոչ ստվերային
իրավաօրենսդարական հենք		կանխատեսելի կարգավորում, սեփականության իրավունքի պաշտպանվածություն և այլն	
կառուցվածքային հենք			
Ֆիզիկական	Ֆինանսական	ֆինանսական համակարգ	շուկաներ, ենթակառուցվածքներ, ինստիտուտներ
		մասնավոր հաստատություններ	մասնագիտացված կառույցներ
		հասարակական հաստատություններ	ինքնակարգավորվող ինստ.-ներ, հասարակական կազմ.-ներ
	Ենթակառուցվածքային	տրանսպորտ, կոմունիկացիա	
		էներգետիկա, ջուր, կոյուղի	
	Բնական ռեսուրսներ	հանքահումքային նյութեր	
		շրջակա միջավայր (ընդերք, անտառ, ծով)	
եղանակը և տեղակայվածությունը			


Ազգային ներուժի բաղադրիչների ճիշտ գնահատումից ու բացահայտումից, ինչպես նաև դրանց առավել ամբողջական օգտագործումից են կախված երկրի առաջընթաց զարգացման հետագա հնարավորությունները: Ռեսուրսային ապահովվածության և դրանց իրագործման ճանապարհին առանձնապես

կարևորվում է «նպատակ → կառավարվող փոփոխականներ → ռեսուրսներ» դասական կապի ճիշտ զնահատումը: Մի կողմից նպատակի ընտրությունն ազդում է ռեսուրսների ընտրության վրա՝ հանգեցնելով նպատակների սահմանափակմանը և զարգացման սահմանափակմանը, մյուս կողմից՝ առկա ռեսուրսները կարող են ազդելով հավակնոտ նպատակների առաջադրմանը՝ խթանել առաջընթացին: Կախված զարգացման կոնկրետ նպատակներից ու զերակայություններից, ազգային ներուժի առաջնահերթությունները կարող են շատ տարբեր լինել, ինչն էլ կարևորում է զարգացման յուրաքանչյուր փուլի ազգային արժեհամակարգային հենքի և ինքնակազմակերպման ազգային բանաձևի ճիշտ որոշման հարցը: Այդ նպատակով աշխատանքում համակողմանիորեն քննարկվում են հասարակական-տնտեսական ներուժի ձևավորմանը և իրագործմանն առընչվող հիմնախնդիրներն ու մոտեցումները: Այստեղ առանձնապես կարևորվում է հասարակական-տնտեսական ներուժի առավելագույնս բացահայտման և ամբողջական օգտագործման խնդիրը: Հաշվի առնելով ասվածը, փորձ է արվել հասարակական հարցման արդյունքների* ** հիման վրա զնահատել Հայաստանի հասարակական-տնտեսական ներուժի ազգային առաջնահերթությունները և երկրի զարգացման մեջ դրանց հնարավոր ազդեցության չափը /տես զծապատկերը/:

Գծապատկեր 3

Հասարակական-տնտեսական ներուժի վարքագծային դրսևորումները. 2001 - 2010 թթ.

Հարցվողների թիրախային խումբ՝ տնտեսագետ-մագիստրոսներ(0-ամենացածր, 1-ամենաբարձր)




Ըստ այդմ, մագիստրոսների մոտ իրականացված շուրջ տաս տարվա հարցման արդյունքներն արձանագրել են հետաքրքիր վարքագծային դրսևորումներ,

*. Շուրջ տասը տարի հարցումներ ենք կազմակերպել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Հանրային կառավարում» առարկայի շրջանակներում՝ մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների մոտ: Մագիստրոսների որպես թիրախային խումբ դիտարկելը պայմանավորված էր երկու հանգամանքով. -մախ, թիրախի առումով, այն կարող է լինել բավական արդյունավետ նրանց արդեն իսկ դիպլոմավորված տնտեսագետներ են և մեր վարվա որոշում կայացնողները, -հետո, նշված առարկայի շրջանակներում, հարցում կազմակերպելը կարող էր հնարավորություն տալ հասկանալ տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև ունենալ դիմամիկ շարքեր: ** .2010 թվականին անց է կացվել հարցում: Հայաստանի Հանրապետության հասարակական-տնտեսական ներուժի ազգային առաջնահերթությունների վերաբերյալ ազգաբնակչության մակարդակով, որտեղ՝ -գլխավոր համակցություն են հանդիսացել բոլոր տնային տնտեսությունները (800հազ.) -ընտրանքային դիտարկման միավոր է հանդիսացել և հանդիսացել կոնկրետ տնային տնտեսությունում տվյալ պահին մերկա 18 տարեկանից բարձր անձը -տնային տնտեսությունների ընտրանքն իրականացվել է ստրատիֆիկացված (շերտավորված)՝ քաղաքային բնակավայրերում միաստիճան, իսկ գյուղական բնակավայրերում երկաստիճան չկրկնվող ընտրանքի ձևով, այսինքն Երևանի բոլոր վարչական շրջանները և մարզերի քաղաքները ընդգրկվել են ընտրանքի մեջ միանշանակորեն, իսկ մարզերի գյուղական բնակավայրերի ընտրությունն իրականացվել է ըստ չափի համամասնության հավանականության -հետազոտության ընտրանքի ծավալը կազմել է 1545 տնային տնտեսություն -հարցվողների կողմից հետազոտության մասնակցության մերժման աստիճանը կազմել է՝ 15 - 30% -հետազոտությունն իրականացվել է հատուկ վերապատրաստված հարցազուցակարների կողմից -բոլոր հարցազույցներն իրականացվել են զույգերով:

մասնավորապես մշակույթի և բնական ռեսուրսների շուրջ. բնական ռեսուրսների կարևորության վերաբերյալ մագիստրոսների կարծիքը 2001 թվականի 0.61 մակարդակից նվազել է մինչև 0.17՝ 2010 թվականին, և հակառակը, մշակութային կապիտալի դերն աճել է՝ համապատասխանաբար 0.35-ից 0.80՝ այն դիտարկելով ամենակարևոր գերակայություն: Բարձր է գնահատվել նաև գիտելիքի և մարդկային կապիտալների դերը: Հաշվի առնելով, որ այդ գնահատականները հարցման ամբողջ ժամանակահատվածում գտնվել են մոտ տիրույթներում, կարելի է փաստել, որ դրանց վերաբերյալ հասարակական կարծիքը կայուն է: Մտահոգիչ է ինստիտուցիոնալ կապիտալի կարևորության վերաբերյալ կարծիքը. 2001 թվականի 0.63-ից այն դարձել է 0.44՝ 2010 թվականին: Հարցվողների հետ քննարկումները ցույց են տալիս, որ նման վերաբերմունքն արդյունք է իրական կյանքում ինստիտուցիոնալ հենքի կիրարկման շատ հակասական դրսևորումների: Մագիստրոսների կողմից առավելագույնս կարևորվում է պատմա-մշակութային գործոնի, մասնավորապես ազգային մտածողության դերը՝ որպես մյուս գործոնների արդյունավետության բարձրացման կարևոր հենք և *հասարակական ներուժի հիմնական բաղադրիչ*: Հասարակական-տնտեսական ներուժի բաղադրիչների վերաբերյալ գնահատականներն ավելի հիմնավոր դարձնելու նպատակով հայ հասարակության շրջանում 2010 թ. իրականացված հարցման արդյունքները հիմնականում ամրագրեցին մագիստրոսների հարցման արդյունքում տրված գնահատականները: Ըստ այդմ, 2010 թ. անցկացված հարցման արդյունքների համեմատական գնահատականները ցույց են տալիս, որ հասարակության, ինչպես նաև, մագիստրոսների կողմից հասարակական-տնտեսական ներուժի դիտարկվող բաղադրիչներից ամենաբարձր գնահատականներ են տրվել գիտակրթական և մարդկային կապիտալներին /տես գծապատկերը/:

Գծապատկեր 4

Հարցման արդյունքների համեմատականը



Հետքրքիր է, որ գիտակրթական կապիտալը հավասարապես կարևորվել է և՛ բոլոր տարիքային խմբերի, և՛ տարբեր եկամտային խմբերի, և՛ տարբեր կրթական հենք ունեցողների, և՛ քաղաքային/գյուղական բնակչության կողմից՝

պահպանվելով 0.73 - 0.78 տիրույթներում: Նույնն է պատկերը նաև մարդկային կապիտալին տրված գնահատականներում: Առանձնապես հետաքրքիր են երկու հարցվող խմբերի կողմից մշակույթին և բնական ռեսուրսներին տրված գնահատականների արդյունքները: Հասարակության կողմից, ի տարբերություն մագիստրոսների, մշակույթի դերը թերկարևորվել է կազմելով ընդամենը 0.40, մագիստրոսների՝ 0.80-ի դիմաց: Ընդ որում, եթե մագիստրոսների պարագայում, տասը տարվա ընթացքում հիմնական տեղաշարժը տեղի էր ունեցել մշակույթի և բնական ռեսուրսների միջև՝ ի օգուտ մշակույթի, ապա հասարակության մոտ, ի հակադրություն մշակույթի հարաբերական ցածր գնահատականի, բարձր է գնահատվել ֆինանսական գործոնի դերը՝ 0.62: Ի հակադրություն հասարակության, մագիստրոսներն առանձնապես չկարևորելով ֆինանսական ռեսուրսների դերը, գտնում են, որ «բավարար կրթված և իրազեկված լինելու դեպքում միշտ էլ կարող են գտնել ազատ ֆինանսական ռեսուրսներ և դրանց ներգրավման համար անհրաժեշտ մեխանիզմներ ու միջոցներ: Ուշադրության արժանի է նաև թե՛ հասարակության, թե՛ մագիստրոսների կողմից բնական ռեսուրսներին տրված ցածր գնահատականը՝ 0.24 և 0.17 համապատասխանաբար: Այստեղ աշխատում է հարցվողների այն տրամաբանությունը, որ «երկրում առկա բնական ռեսուրսների որևէ քանակական աճ դժվար է ակնկալել /այն հաստատում մեծություն է/, բնականաբար պետք է ավելի շատ մտածել դրանց առավել արդյունավետ օգտագործման մասին, որտեղ էլ հենց կարևոր դեր կարող են ունենալ մշակույթ, ազգային մտածողություն և գիտակրթական գործոններ»:

Հասարակական-տնտեսական ներուժի ավելի խորքային ուսումնասիրության նպատակով իրականացվել է հասարակական տնտեսական ներուժի վերաբերյալ հարցման արդյունքների հետազոտություն՝ գլխավոր բաղադրատարրերի (կամ գործոնային) վերլուծության եղանակով***: Ստացված արդյունքների մեջ առավել ուշագրավ է «մշակույթ» և «բնական ռեսուրսներ» բաղադրիչների հասարակական կարծիքի համեմատական գնահատականը: Եթե «մշակույթին» ամենաքիչ կարևոր 7-րդ տեղը տվել է հարցվողների 21.6%-ը, ապա «բնական ռեսուրսներին» նույն տեղը տվել են հարցվողների շուրջ 43.3%-ը: Հետաքրքիր է նաև հարցվողների վարքագծային դրսևորումը գիտելիքի նկատմամբ, որին ամենացածր կարևորում տրվել է բոլոր հարցվողների ընդամենը

*** *Stu Сошникова Л., Тамашевич В., Уеве Г., Шиффер М., Многомерный статистический анализ в экономике, М., ЮНИТИ, 1999, էջ 333-400; Айвазян С., Мхитарян В., Прикладная статистика и основы эконометрики, М., ЮНИТИ, 1998, էջ 521-565; Фадеев Д., Фадеева В., Вычислительные методы линейной алгебры, М., Лань, 2005, էջ 64-67:*

Այս եղանակը հնարավորություն է տալիս նախնական փոփոխականների հիման վրա կառուցելու միմյանց հետ չկոռելացված նոր փոփոխականներ /գլխավոր բաղադրատարրեր կամ պարզապես գործոններ/: Կառուցված գլխավոր բաղադրատարրերը նախնական փոփոխականների վրա կառուցված զծային կոմբինացիաներ են՝ հիմնված նախնական փոփոխականների կոռելյացիոն մատրիցի վրա: Վերջինիս օգնությամբ հաշվարկված սեփական արմատները և վեկտորները կիրառվել են գլխավոր բաղադրատարրերի հաշվարկման համար /մանրամասն տես Փաշեև Д., Фадеева В., Вычислительные методы линейной алгебры/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին գլխավոր բաղադրատարրը բացատրում է նախնական փոփոխականների դեպրեսիայի առավելագույն չափը, վերլուծության համար կիրառվել է միայն առաջին գլխավոր բաղադրատարրը՝ դիտարկելով այն որպես հասարակական - տնտեսական ներուժի ազդեցացված ցուցանիշ: Կատարվել են նաև մաթեմատիկական վիճակագրության մեջ հայտնի F-չափանիշների վերաբերյալ հաշվարկները /մանրամասն տես Айвазян С., Мхитарян В., Прикладная статистика и основы эконометрики/: Հաշվարկներն իրականացվել են SPSS ծրագրային փաթեթի օգնությամբ:

0.8%-ի կողմից, իսկ մնացած 99.2% կողմից այն 10 տարի շարունակ պահպանվել է 1-4 բարձր հորիզոնականներում: Հասարակական-տնտեսական ներուժի վերաբերյալ մագիստրոսների տասը տարվա հարցման արդյունքների միջին բաշխվածությունը հնարավորություն է տալիս գնահատելու հարցվողների կարծիքների ցրվածությունը՝ հասարակական-տնտեսական ներուժի կոնկրետ բաղադրիչի վերաբերյալ, ինչը կարևոր ազդակ է առ այն, թե որքանով են հարցվողները մոտ յուրաքանչյուր բաղադրիչի դերի վերաբերյալ՝ հասարակական-տնտեսական ամբողջական ներուժի ձևավորման գործում: Ըստ այդմ, հարցվողների կարծիքները «մշակույթ» բաղադրատարրի վերաբերյալ ցրված են, ինչը վկայում է, որ հասարակական-տնտեսական ներուժի ձևավորման գործում մշակույթի դերի վերաբերյալ ազգաբնակչության կարծիքը *դեռևս զտնվում է ձևավորման գործընթացում՝ ի օգուտ մշակույթի կարևորման*: Արտահայտված ցրվածություն է նկատվում նաև «բնական ռեսուրսներ» մոտ՝ դրևորելով դրանց դերի թերկարևորման միտում: Մնացած բաղադրիչների առումով՝ հարցվողների պատասխաններն առանձնապես ցրված չեն և նրանց կարծիքը հիմնականում ձևավորված է. «գիտելիքը» կարևորվել է ազգաբնակչության շուրջ 80%-ի կողմից, իսկ մարդկային կապիտալը՝ ավելի քան 70%-ի կողմից:

Ուշագրավ է նաև հասարակական-տնտեսական ներուժի ազդեցացված ցուցանիշի /առաջին գլխավոր բաղադրատարր/ և դրա առանձին բաղադրիչների միջև բացահայտված կոռելյացիոն կապը: Մասնավորապես, կորելյացիոն գործակիցները մեծությունները ցույց են տալիս, որ տարբեր տարիների ընթացքում հասարակական-տնտեսական ներուժի ազդեցացված ցուցանիշի վրա առաջնային ազդեցություն են ունեցել «մշակույթ» և «բնական ռեսուրս» բաղադրիչները, չնայած դրանց բացասական նշանով կոռելյացվածությանը: Հասարակական-տնտեսական ներուժի ազդեցացված ցուցանիշի և առանձին բաղադրիչների ռեգրեսիոն կախվածության գործակիցները ցույց են տալիս, թե ինչքան կփոխվի հասարակական-տնտեսական ներուժի ազդեցացված ցուցանիշը՝ իր և յուրաքանչյուր բաղադրիչների միջին արժեքների նկատմամբ՝ 1% փոփոխության դեպքում: Որպես օրինակ, մեկնաբանելով 2008 թվականի արդյունքները /տրանք ավելի խոսում են/, կարելի է փաստել, որ «մշակույթ» բաղադրիչի՝ իր միջինի նկատմամբ 1% փոփոխությունը նպաստում է հասարակական-տնտեսական ներուժի ազդեցացված ցուցանիշի՝ իր միջինի նկատմամբ 0.39% փոփոխման: «Գիտելիք» բաղադրիչի համապատասխան փոփոխությունը հանգեցնում է հասարակական-տնտեսական ներուժի ազդեցացված ցուցանիշի 0.32% փոփոխության և այլն: Նույն տրամաբանությամբ համեմատելով գործակիցների մեծությունները նաև մյուս տարիների համար, ակնհայտ է դառնում, թե որքան լուրջ ներդրումային ներուժ կարող են լինել «մշակույթ» և «գիտելիք» բաղադրատարրերը: Այսպիսով, գլխավոր բաղադրատարրերի վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ըստ մագիստրոսների հարցման արդյունքների, հասարակական-տնտեսական ներուժի ձևավորման առաջնային բաղադրիչներն են՝ «մշակույթը», «գիտելիքը»: Ազգաբնակչության մակարդակով կատարված հարցման արդյունքներով, ի լրումն «մշակույթ» և «գիտելիք» բաղադրիչների, առանձնապես կարևորվում է մարդկային ներուժը: Առաջնահերթության միջին դիրքերում են «ինստիտուցիոնալ» և «ենթակառուցվածքային» բաղադրիչները: Այսպիսով, և՛ ազգաբնակչության, և՛ մագիստրոսների, հարցման արդյունքներով հասարակական-տնտեսական ներուժի

ամբողջական ձևավորման գործընթացում առաջնահերթ գերակայությունը տրվում է «մշակույթ» և «գիտելիք» բաղադրիչներին:

Ազգային ամբողջական ներուժի արդյունավետ ձևավորման տեսակետից առանձնապես կարևորվում է երկրի զարգացման վրա ազդող գործոնների միջև առկա փոխկապվածությունների բացահայտման խնդիրը: Այս տեսակետից բավական օգտակար են երկրների մրցունակության վերաբերյալ «Համաշխարհային մրցունակության» զեկույցի⁴ կողմից իրականացվող տնտեսությունների բազմաչափ գործոնային ուսումնասիրությունները: Հայաստանին տրված միջազգային գնահատականների և հասարակական-տնտեսական ներուժը պայմանավորող գործոնների վերաբերյալ ազգաբնակչության շրջանում անցկացված հարցուման արդյունքների համեմատական վերլուծությունը տվել է բավական հետաքրքիր պատկեր՝ առկա իրավիճակի ճիշտ ու օբյեկտիվ գնահատման, եղած խնդիրների բացահայտման ու դրանց հետևողականորեն հաղթահարման տեսանկյունից: Ըստ այդմ, ինստիտուցիոնալ գործոնի վերաբերյալ միջազգային գնահատումների /փաստի/ և հասարակական հարցման արդյունքների /հանրային կարծիքի/ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց միջև կոռելյացիոն կապը բավական բարձր է /0.748/, այսինքն՝ երկրում իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումները և այդ գործոնի նկատմամբ եղած հասարակական ընկալումը համահունչ է: Այլ է պատկերը «ենթակառուցվածքային» գործոնի համեմատական գնահատումներում. հասարակական հարցման արդյունքները, այսինքն հասարակական ընկալումը համահունչ չէ միջազգային գնահատականներով արտահայտված ենթակառուցվածքային ոլորտի փաստացի դրսևորումներին, որոնց միջև կորելյացիոն կապը բավական թույլ է՝ /0.212/: Ավելին, այդ կապը բացասական է, ինչը նշանակում է, որքան ավելի ակնհայտ են դառնում ոլորտի բարելավման միտումները, այնքան ավելի քիչ են դրանք կարևորվում հասարակական ընկալման մեջ: Կատարված դիտարկումներն իսկապես հակասական են, բայց՝ նաև բացատրելի: Այն թերկարևորվում է ոչ թե բովանդակային առումով, այլ հայաստանյան այսօրվա իրողության մեջ հասարակական-տնտեսական ներուժի վրա նրա փաստացի ազդեցության առումով: Այս տեսակետից անելիքները կարևորվում են ոչ միայն բուն ինստիտուցիոնալ և ենթակառուցվածքային զարգացման խնդիրների տեսակետից, այլ նաև հասարակական ընկալման մեջ ինստիտուցիոնալ գործոնի դերի արագ վերականգնման և կարևորման առումով՝ որպես ինստիտուցիոնալ բարեփոխումների անուղղակի, բայց շատ կարևոր խթան: «Մարդկային ռեսուրսներ» գործոնի համեմատական գնահատականները նույնպես ցույց են տալիս թույլ կոռելյացիա՝ միջազգային գնահատումների և հասարակական հարցման արդյունքների միջև /0.279/: Այստեղ նույնպես նկատվում են որոշակի հակասություններ միջազգային գնահատականների և հասարակական ընկալման միջև: Այս դեպքում նույնպես կապը բացասական է, ուղղակի մի առանձնահատկությամբ՝ որքան ավելի է կարևորվում մարդկային գործոնը հանրության ընկալմամբ, այնքան ավելի ոչ միանշանակ են փաստացի բարենպաստ դրսևորումները: Այստեղ կարող են օգտակար լինել երկրների լայն շրջանակների համար իրականացված՝ մարդկային զարգացման ինդեքսի և

⁴ The Global competitiveness Report, 2011–2012, World Economic Forum, /«Համաշխարհային մրցունակության» զեկույցը երկրների մրցունակության վերաբերյալ իրականացվող տնտեսությունների բազմաչափ ուսումնասիրություն է: Այն պարտասովում է աշխարհի առաջատար գիտնականների կողմից՝ կոնկրետ երկրների գործընկեր ինստիտուտների հետ համագործակցության միջոցով:

մարդկային ինդեքսի աճի միջին արժեքի կոռելյացիոն վերլուծության արդյունքները, որոնք վկայում են դրանց միջև առկա թույլ կապվածության մասին: Հայաստանը, կատարվող ուսումնասիրության շրջանակներում զբաղեցնում է ոչ բարենպաստ դիրք՝ մարդկային ռեսուրսների զարգացման տեսակետից: Ֆինանսական և բնական ռեսուրսներն ունենալով կարևոր նշանակություն երկրների զարգացման գործում, այնուամենայնիվ, առանցքային չեն դիտարկվում՝ ըստ հասարակական հարցման արդյունքների: Հաշվի առնելով միջազգային գնահատումներով Հայաստանի ֆինանսական համակարգում արձանագրված է առաջընթաց (ֆինանսական զարգացվածության վարկանիշը 2008 թվականի 110-ից առաջ է գնացել մինչև 97՝ 2011-ին), կարելի է եզրահանգել, որ այստեղ անելիքներն ավելի շատ ածանցյալ են ազգային ներուժի մյուս գործոններից: Նույնը է տրամաբանությունը նաև բնական ռեսուրսների բաղադրիչի առումով:


Կատարված դիտարկումներն առանձնապես կարևոր են ազգային ներդրումային *ներուժի բովանդակային առանձնահատկությունների բացահայտման տեսակետից*: Այստեղ մեծ հետաքրքրություն է ներկայացնում *մշակութային կապիտալը*՝ և նեղ իմաստով՝ որպես ուղղակի ազգային մշակույթ, և՛ լայն իմաստով՝ որպես զուտ մտածողական, կրթական, կազմակերպչական մշակույթ: Նման լայն ընկալմամբ մշակույթը ներխուժում է ցանկացած կազմակերպչական համակարգ, գրավելով տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, էկոլոգիական և ինստիտուցիոնալ հատվածները: Ավելի ու ավելի արդիական է դառնում հասարակական-տնտեսական գործընթացներում *գիտելիքը՝ ազգի մտավոր ներուժի դերը*: Գիտելիքի վրա հիմնված տնտեսությունն արդեն վաղուց աշխարհում դարձել է արտադրության գլխավոր գործոն և ռազմավարական պահուստ /աշխարհի առաջատար երկրներում ՀՆԱ-ի 75 - 85%-ը ապահովում են ոչ թե էներգակիրներ, այլ՝ գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը/: Ջարգացած երկրները մտել են տնտեսական աճի որակապես նոր փուլ՝ հիմնված գիտելիքի և ազգային նորարարական համակարգերի վրա: Այստեղ նույնպես կարևորվում է մշակույթի դերը, քանի որ ցանկացած լուծում, առաջին հերթին, պայմանավորված է ազգային մտածողությամբ, առկա խնդիրների նկատմամբ անհատի ու ազգի կողմից դրսևորված վերաբերմունքով: Այս տեսակետից առանձնահատուկ տեղ ունի *մարդկային կապիտալը*, ինչն, ըստ էության, ազգի ֆիզիկական ու մտավոր կարողությունն է և ստեղծագործական աշխատանք կատարելու ունակությունը: Այստեղ առանձնապես կարևորվում է մարդն՝ իր պատմամշակութային և բարոյահոգեբանական նորմերով՝ որպես ազգային ներդրումային ներուժի մյուս բաղադրիչների արդյունավետության բարձրացման կրող և, միաժամանակ, կարևոր հենք: Ազգային ներդրումային ներուժը պայմանավորող կարևոր բաղադրիչ է երկրի *ինստիտուցիոնալ հենքը*: Այստեղ շատ մեծ է մշակույթի և գիտելիքի բաղադրիչների դերը, քանի որ դրանք են կանխորոշում թե՛ ինստիտուցիոնալ հենքի բովանդակությունը, թե՛ իրական կյանքում դրա ներդրման ու կիրարկման արդյունքները: Ազգային ներուժը պայմանավորող *ֆիզիկական բաղադրիչներից* առաջնայինը *ենթակառուցներով* պայմանավորված կապիտալն է: Այնուհետև կարևորվում են *ֆինանսական ռեսուրսները*: Հանրության կողմից սրա նվազ կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ամբողջ աշխարհում կան մեծ ծավալի ազատ ֆինանսական ռեսուրսներ: Պարզապես առողջ ինստիտուցիոնալ հենք ու գրավիչ ներդրումային միջավայր ունենալու, ինչպես նաև՝ բավարար կրթված և իրազեկված լինելու դեպքում կարելի է գտնել այդ ֆինանսների և՛ տեղը, և՛ ներգրավման եղանակներն

ու ձևերը: Ազգի ներուժը, իհարկե, պայմանավորված է նաև այն տարածքով, որտեղ ազգն ապրում է, և այդ տարածքի *բնական ռեսուրսներով*, ինչի առավել նպատակային և արդյունավետ օգտագործման տեսակետից առանձնահատուկ կարևորվում են ազգային մտածողությունը, գիտելիքը և մարդկային կապիտալը: Այսպիսով, երկրի առաջընթաց զարգացման տեսակետից ամենակարևորը ոչ թե տնտեսական ռեսուրսներն են, այլ՝ արտատնտեսական՝ մասնավորապես *հավաքական մշակութային ռեսուրսը*:

Ազգային ամբողջական ներուժի ձևավորման ժամանակ շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ հասարակական-տնտեսական ներուժի յոթ բաղադրիչները սերտորեն փոխկապակցված են: Այս տեսակետից ազգային ամբողջական ներուժի ձևավորման գործընթացը յոթ փոփոխականներով բարդ օպտիմալացման խնդիր է, որի արդյունքը՝ տնտեսական զարգացումը և հասարակական բարեկեցությունը, այնքանով մեծ կլինի, որքանով օպտիմալ կզուգակցվեն այդ բաղադրիչներն ու որքանով ամբողջական կձևավորվի ազգային ներդրումային ներուժը: Նման մոտեցումը հնարավորություն կտա գտնել ազգային առանձնահատկությունների վրա հիմնված և, միաժամանակ, համաշխարհային զարգացման միտումներին համահունչ, զարգացման առավել ընդունելի այլընտրանքային տարբերակները, և որոշելով լավագույնը /տես գծապատկերը/:

Գծապատկեր 5

Հասարակական-տնտեսական ներուժի ձևավորման տրամաբանությունը




Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հասարակական-տնտեսական զարգացմանն առընչվող վերլուծությունները և գնահատականները, ելնելով երկրի

հեռանկարային զարգացմանը միտված գերակայությունների բովանդակային առանձնահատկությունները կարելի է ներկայացնել Հայաստանի հասարակական-տնտեսական երկարատև զարգացման հայեցակարգային հենքը (տես գծապատկերը):

Գծապատկեր 6

Հասարակական-տնտեսական համակարգի բովանդակային կառուցվածքը



Հաշվի առնելով, որ փոփոխությունները միշտ անհամապատասխանություններ են առաջացնում նոր իրողության և մարդկանց մտածողության միջև, առանձնապես կարևորվում է արժեքների, մոտեցումների, նորմերի անընդհատ վերանայման, վերագնահատման ու վերահիմնաստավորման խնդիրը: Այստեղ կարևորվում է նաև համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններին արագ և ճկուն հարմարվելու կարողությունը: Սա նշանակում է համարժեք մոտեցումներ և մեխանիզմներ, որոնք կօգնեն արագ և արդյունավետ հարմարեցնել երկրի ռազմավարությունը և ինստիտուտները՝ փոփոխվող իրավիճակներին: Այս տեսակետից շատ օգտակար կարող է լինել «Գլոբալ մրցունակության համաժողովի» կողմից մշակված փուլային զարգացման հայեցակարգը՝ հիմնված տնտեսական զարգացման գործոնների համալիր վրա, որտեղ գործոններից յուրաքանչյուրի կարևորությունը պայմանավորված է կոնկրետ երկրի տնտեսական զարգացման այն փուլով, որում նա գտնվում է⁵: Ելնելով երկրների զարգացման մակարդակներից՝ համաժողովի զեկույցում դիտարկվում են տնտեսական զարգացման երեք ազդեցացված փուլեր՝ յուրաքանչյուր փուլին բնորոշ գործոնային խմբերով. *ռեսուրսների վրա հիմնված զարգացման փուլ, արդյունավետության վրա հիմնված փուլ, նորարարությունների վրա հիմնված փուլ*:

Հիմք ընդունելով «Համաշխարհային տնտեսական համաժողովի» կողմից մշակված փուլային զարգացման մեթոդաբանությունը և հաշվի առնելով հասարակական-տնտեսական զարգացումների վերաբերյալ աշխատանքում կատարված հետազոտության արդյունքները, ինչպես նաև ելնելով այն փաստից, որ մշակույթի վերաբերյալ ավանդական պատկերացումներն այսօր փոխվել են և մշակույթի դերի և տեղի մասին հարցն ավելի ու ավելի արդիական է դառնում հասարակական-տնտեսական զարգացման գործընթացներում՝ պայմանավորված արդի մրցակցային իրավիճակային փոփոխություններով, արդիական է դարձել հասարակական-տնտեսական զարգացման հոգևոր առաջնայնությունների փուլին անցման անհրաժեշտությունը: Զարգացման հոգևոր առաջնայնություններին անցման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գիտելիքի գործոնի դիտարկումը որպես հասարակական-տնտեսական զարգացման

⁵ The Global competitiveness Report, 2011-2012, World Economic Forum, p. 100-101

ինքնաբավ գործոն բավարար չէ, իսկ տեղեկատվական հասարակության մոդելը՝ միայն գիտության վրա կողմնորոշվող նրա ժամանակակից ինստիտուցիոնալ ձևերով, ըստ էության համարվում է ոչ ամբողջական: Ավելին, այն միջոց է և միջանկյալ պարբերաշրջան՝ հասարակական-տնտեսական զարգացման նոր՝ հոգևոր առաջնայնությունների փուլին անցման ճանապարհին /տես գծապատկերը/:

**Գծապատկեր 8
Հասարակական-տնտեսական զարգացման հիմնական փուլերը**


III. Հոգևոր արժեհամակարգի վրա հիմնված զարգացում

- 1. Մշակույթ
- 2. Գիտելիք
- 3. Մարդկային կապիտալ




III. Նորարարության վրա հիմնված զարգացում

- 1. Բիզնեսի զարգացվածությունը
- 2. Նորամուծությունները



II. Արդյունավետության վրա հիմնված զարգացում

- 1. Բարձրագույն կրթությունը և վերապատրաստումը
- 2. Ապրանքային շուկայի արդյունավետությունը
- 3. Աշխատուժի շուկայի արդյունավետությունը
- 4. Ֆինանսական շուկայի զարգացվածությունը
- 5. Տեխնոլոգիական շուկայի պատրաստվածությունը
- 6. Շուկայի չափը



I. Ռեսուրսների վրա հիմնված զարգացում

- 1. Ինստիտուտներ
- 2. Ենթակառուցվածքներ
- 3. Մակրոտնտեսական կայունություն
- 4. Առողջապահություն և առաջնային կրթություն



Հիմք ընդունելով ասվածը, ինչպես նաև հաշվի առնելով հասարակարգերի մոդելների հերթափոխության գործընթացների արագացման փաստը, կարելի է ամփոփել, որ անցումը հասարակական զարգացման նոր

առաջնայնությունների խիստ արդիական է: Նման մոտեցումն արմատապես փոխում է զարգացման գաղափարախոսությունը, ինչը ենթադրում է երկարաժամկետ տնտեսական քաղաքականության բոլորովին նոր շեշտադրումներ: Սա նշանակում է անցում՝ արժեքների հերթափոխության նոր պարբերաշրջանի, որտեղ արտատնտեսական՝ հոգևոր գործոններն ակնհայտորեն առաջնային են տնտեսական գործոնների նկատմամբ: Հոգևոր առաջնայնությունների վրա հիմնված հասարակարգի առաջարկված մոդելի գլխավոր տարբերակիչ առանձնահատկությունը անհատի հոգևոր-մշակութային հատկանիշների ընդլայնված վերարտադրությունն է՝ ուղղորդված գիտելիքի վրա հիմնված որակական զարգացումով: Ընդունելով, որ գիտելիքների պարզ կուտակումը՝ առաջնային կրթության ձևով, պարտադիր է, քանի որ անհատին դարձնում է օգտակար հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այնուամենայնիվ, այն դեռևս չի նշանակում անհատի որակական զարգացում: Միաժամանակ, գիտելիքների պարզ կուտակումն է, որ կարող է լուրջ հենք հանդիսանալ անհատին, բնականաբար՝ նաև հասարակությանը՝ դեպի զարգացման առավել բարձր մակարդակ տեղափոխելու համար: Միայն նման մոտեցման դեպքում հասարակական զարգացման այս մոդելը կարող է ապահովել հասարակության ինքնազարգացում: Հիմնական գաղափարն այն է, որ զարգացման առանցքային ազդակները ծագելով մարդկային մշակույթում, այնուհետև, երկարաժամկետ հատվածում, ենթարկվելով փոփոխության՝ համապատասխանաբար ազդում են ազգային մտածելակերպի վրա, ինչն էլ, ի վերջո, վերածնակտորում է հասարակական-տնտեսական համակարգը՝ նոր հիմնարրույթների ներքո: Հոգևոր-մշակութային արժեհամակարգի և մարդու դերի կարևորության մասին կարծիքները եղել են հասարակական-տնտեսական զարգացման համարյա բոլոր համակարգերի ժամանակ^{6 7 8 9}: Այն ուղղակի նոր հնչեղություն և նոր բովանդակություն է ստացել համաշխարհային գլոբալ գործընթացների և ֆինանսա-տնտեսական ճգնաժամի վերջին զարգացումների ներքո^{10 11 12}: Հասարակության զարգացման հոգևոր առաջնայնությունների վերաբերյալ առաջարկը նոր բան չէ նաև հայկական իրողությունում, ինչի կենսականությունն ապացուցվել է հայ մարդու, հայ ազգի ամբողջ գոյության ընթացքում: Իհարկե այն այսօր ստացել է նոր բովանդակություն, ինչը նշանակում է մեր մշակութային ավանդույթների, մեր ժողովրդին բնորոշ հոգևոր արժեքային համակարգերի արդիականացում ու զարգացում: Սա նշանակում է հենվելով դարերի խորքից

⁶ Вилькен Ф., *Самостоятельная экономика как условие развития общества, М.: Антропософия, 1994*

⁷ Шумпетер, *Теория экономического развития, М., 1982*

⁸ Штайнер Р., *Основные положения социального вопроса, Ереван, 1992*

⁹ Друкер П., *Новые реальности в правительстве и политике, в экономике и бизнесе, в обществе и мировоззрении, М.: ВлаДар, 1994*

¹⁰ Петров К., *Тайны управления человечеством или тайны глобализации, М.: НОУ Академия, 2009*

¹¹ Деминг Эд., *Выход из кризиса: Новая парадигма управления людьми, системами и процессами, М.:*

ООО Альпина Бизнес Букс, 2007

¹² Սարիբեկյան Ա., *Ֆինանսատնտեսական ճգնաժամը. հաղթահարման ուղիները և հետճգնաժամային զարգացումները, Երևան, ԵՃՇՊՀ տպագրության և լրատվության կենտրոն, 2010*

կուտակված մշակութային գրեթե անսպառ ռեսուրսի ու գիտելիքի հսկա պաշարի վրա, անցնել հասարակության զարգացման հոգևոր առաջնայնությունների՝ դրանից բխեցնելով մեր ապագան ու զարգացումը: Նման մոտեցումը հնարավորություն կտա ձևավորել նոր մարդու հոգեկերտվածք ու նոր աշխարհայացքային մտածողություն, նոր գիտելիքահենք տնտեսություն և նոր հասարակություն, ուղղակի «նոր» երկիր:

Աշխատության մեջ համակողմանիորեն քննարկվում են հասարակական-տնտեսական զարգացման հոգևոր առաջնայնություններին անցման գործընթացը, դրան առընչվող հիմնախնդիրները և հաղթահարման ուղիներ: Այստեղ առանձնակի կարևորվում են հասարակական զարգացման խնդիրները, ինչին մանրամասն անդրադարձ է կատարվում չորրորդ՝ **«Հասարակական-տնտեսական զարգացման հոգևոր առաջնայնություններին անցման գործընթացը. հիմնախնդիրները և հաղթահարման ուղիները»** գլխում: Հասարակության զարգացման գոյություն ունեցող հայեցակարգերից յուրաքանչյուրին բնորոշ են հստակ առանձնահատկություններ և տնտեսական աճի ու հասարակության զարգացվածության համապատասխան մակարդակ:

Հասարակության զարգացման վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ ուղղությունների մեջ, այս հետազոտության տեսակետից, հետաքրքիր է Մ. Ջեյմսի մոտեցումը, որը դեռևս 19-րդ դարի վերջին հասարակական օգտակարությունը համարելով բարոյականության բարձրագույն սկզբունք ու չափորոշիչ, որպես իրավիճակի իրական տերեր դիտարկում է դրանց կրողին՝ «միջին խավին»¹³: Շատ կարևոր է նաև ամերիկացի տնտեսագետ Ուոլտ Ռոստոուի¹⁴ մոտեցումը, համաձայն որի հասարակության զարգացումը, առաջին հերթին, տեղի է ունենում տնտեսական զարգացման հենքի վրա՝ ապահովելով որակական անցումներ՝ ավանդական հասարակությունից՝ անցումային, թռիչքի փուլից՝ դեպի հատուկության, այնուհետև վերջին՝ կյանքի որակի որոնման փուլ, որտեղ արդեն առաջին պլան է մղվում ոչ թե տնտեսական գործունը, այլ մարդու հոգևոր, բարոյական, մտավոր և, որ ամենակարևորն է, մշակութային զարգացումը: Նա տնտեսական աճի անցումը մի փուլից մյուսին պայմանավորում է սպառման աճով: Ըստ էության, Ռոստոուի չորրորդ՝ բարձր զանգվածային սպառման փուլը բնորոշ է արդի նախաճգնաժամային փուլին, երբ զարգացման հիմնական խթանը սպառման անմախաղեսպ աճն էր, և, որպես հետևանք՝ եկամուտների ու ծախսերի ոչ հավասարակշիռ զարգացումը՝ դառնալով ճգնաժամի պատճառ: Ռոստոուի վերջին՝ կյանքի որակի փնտրման փուլը ներկայացնում է հետճգնաժամային արդի վիճակը, երբ ճգնաժամի հաղթահարման փնտրտուքների մեջ հասարակական զարգացման հոգևոր առաջնահերթությունները դառնում են այն ելակետը, ինչից պետք է սկսել կյանքի որակի փոփոխությունը՝ որպես ճգնաժամի հաղթահարման և առաջընթաց զարգացման հիմնական ճանապարհ:


Բոլոր այս անցումները ենթադրում են համապատասխան վերափոխումներ՝ որոնք իրականացվում են անընդհատ և բավական բարդ տրանսֆորմացիոն գործընթացների միջոցով, ինչն էլ կարևորում է տրանսֆորմացիոն գործընթացների ավելի խորքային դիտարկումը: Տրանսֆորմացիոն գործընթացներն առնչվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներին՝ սկսած ազգային

¹³ St u James M., *Analysis of the Phenomena of the Human Mind*, USA, University of Toronto, 2006, էջ 89:

¹⁴ St u Rostow W.W., *The Stages of Economic Growth: A Non-Communist Manifesto*, Cambridge, Cambridge University Press, 1960, էջ 93:

գաղափարախոսական ու արժեհամակարգային խնդիրներից մինչև՝ քաղաքական, սոցիալական ու տնտեսական /տե՛ս գծապատկերը/:

Գծապատկեր 9



Հաշվի առնելով տրանսֆորմացիոն հասարակության ուսումնասիրման տեսագործական կարևորությունը, ինչպես նաև դրա վերաբերյալ եղած մոտեցումների բազմազանությունը՝ նպատակահարմար է տրանսֆորմացիոն խնդիրը դիտարկել որպես տրանսֆորմացիոն հասարակությունների ուսումնասիրման ելակետ¹⁵: Նման մոտեցման դեպքում, դիտարկված խնդիրներից յուրաքանչյուրը, առնչվելով սոցիալական համակարգերի համապատասխան հիմունքներին, ճիշտ գործարկման դեպքում կարող է ունենալ լուրջ հավաքական ազդեցություն հասարակական զարգացման գործում: Իհարկե, ինչպես ցույց է տալիս տրանսֆորմացիոն հասարակությունների փորձը, չկա միասնական մոտեցում՝ թե՛ առկա խնդիրների առաջնահերթությունների ու թե՛ դրանց լուծման ուղիների ու գործառնական մեխանիզմների հարցում:

¹⁵ Հարությունյան Է., Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2000, էջ 4:
«Աշխատանքային» մեկնաբանությունից ելնելով՝ Է. Հարությունյանը նպատակահարմար է գտել օգտագործել «տրանսֆորմացիոն հասարակություն» հասկացությունը և, այդ համատեքստում, «անցումային հասարակություն» հասկացության փոխարեն օգտագործել «տրանսֆորմացիոն խնդիր» հասկացությունը՝ այն դիտարկելով որպես տրանսֆորմացիոն հասարակությունների դիտարկման ելակետ, իսկ բուն տրանսֆորմացիոն գործընթացը դիտարկել որպես այդ խնդրի լուծման եղանակ: Նման մոտեցումն ընդունելի է նաև տվյալ հետազոտության համար, քանի որ, ինչպես նշում է Է. Հարությունյանը /էջ 5/, «մասնագիտական գրականության մեջ գերիշխում են իրադրային վերլուծությունները» և «ժամանակակից սոցիալ-փիլիսոփայական գրականության մեջ ճշտված չէ տրանսֆորմացիոն հասարակությունների գործառնության և զարգացման օրինաչափությունները բացատրող կատեգորիալ համակարգը», ինչն առաջնահերթ պայմանավորված է նրանով, որ «տրանսֆորմացիոն գործընթացներն առնչվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներին, խիստ քաղաքականացված են և, որն առավել կարևոր է, չկա անցումային փուլերի հետազոտման քիչ թե՛ շատ մշակված մեթոդաբանություն»:

Տրանսֆորմացիոն յուրաքանչյուր հասարակություն, պայմանավորված կոնկրետ իրավիճակով ու ազգային առանձնահատկություններով, կարող է գտնել զարգացման իր այլընտրանքը: Բոլոր դեպքերում, թե՛ այդ խնդիրները, թե՛ դրանց լուծման ուղիները, կարող են պայմանավորվել.

- կոնկրետ երկրի ռեսուրսային հնարավորություններով
- այդ խնդիրների լուծման անհրաժեշտության հասարակական ընկալման «համամասնության չափով»¹⁶, արտահայտված հասարակական համախմբվածության և հասարակություն-պետություն արդյունավետ համագործակցության համատեքստում:
- տրանսֆորմացիայի «սոցիալական զնով»¹⁷, ինչից կախված կարող են առաջանալ տրանսֆորմացիայի անհրաժեշտության¹⁸ և տրանսֆորմացիոն խնդրի լուծման այս կամ այն եղանակի նպատակահարմարության¹⁹ հարցերը,
- ազգային ինքնության և սոցիոմշակութային կեցության խնդիրներով²⁰ և այլն:

Այստեղ հավասարապես կարևորվում են թե՛ սոցիալական համակարգերի առանձին տարրերը ու համակարգերի հետ դրա կապն ու փոխհարաբերությունները, թե՛ ճիշտ գործառնական մեխանիզմներն ու դրանց նպատակային գործարկումը: Այս տեսակետից, առանձնապես, կարևորվում են տրանսֆորմացիոն խնդրի ճիշտ ձևակերպումը, խնդրի լուծման արժեքային-զաղափարական ուղիների և գործառնական մեխանիզմների հստակեցումը:

Ակնհայտ է, որ *ցանկացած համակարգ արդյունավետ կարող է լինել միայն զարգացող և գործառնական վիճակների օպտիմալ հարաբերակցությունների պահպանման ճանապարհով*: Այստեղ առանձնապես կարևորվում է տրանսֆորմացիոն խնդրի լուծման ռացիոնալության հարցը: Այս տեսակետից տրանսֆորմացիոն խնդրի լուծումը կախված է ոչ միայն տեսական ճիշտ որոշումից, այլ նաև լուծման օբյեկտի ներքին դիմադրությունից, ինչը նշանակում է, որ մի կողմից անհրաժեշտ է հաղթահարել տրանսֆորմացվող օբյեկտի ներքին դիմադրությունը, իսկ մյուս կողմից՝ տրանսֆորմացիոն գործընթացների մեջ կատարել համապատասխան ճշգրտումներ²¹: Այստեղ կարող է օգտակար լինել հասարակական-տնտեսական գործընթացներում ռացիոնալ-իռացիոնալի հարաբերակցության դիտարկումը, ինչի վերաբերյալ շատ բազմազան են և խիստ հակասական: Այստեղ խնդիրն ավելի շատ ճանաչողության հնարավորությունների սահմանափակությունն է, ինչն էլ դժվարեցնում է կենսագործունեության իռացիո-

16. Егоров И., Принцип свободы как основание общей теории регуляции, - Вопросы философии, 2000/2, с.15.

17. Հարությունյան Է., Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2000, էջ 8:

18. Անհրաժեշտության տեսակետից համակարգային տրանսֆորմացիաները քննարկել են՝ Դ. Ժ. Սարկովիչը, Ա. Ն. Ավերյանովը, Վ. Ի. Կուցենկոն, Ա. Ի. Պրժոզինը, կոնկրետ խորհրդային համակարգի տրանսֆորմացիայի անհրաժեշտության անդրադարձել են Արոն, Բզեժմանկին, Թոֆլերը, որոնք խնդրին անդրադառնալով զաղափարական ու քաղաքական տեսանկյունից, առանձնապես չեն անդրադարձել սոցիալական համակարգերի տրանսֆորմացիոն խնդիրներին:

19. Տրանսֆորմացիոն խնդրին «սոցիալական զնով» տեսանկյունից անդրադարձել են Ա.Ն. Դանիլովը, Վ. Ս. Սեժուևը, Ա. Ս. Պանարինը և այլք:

20. Ազգային ինքնության և սոցիոմշակութային խնդիրների տեսանկյունից, կոնկրետ Հայաստանի տրանսֆորմացիոն խնդիրներին անդրադարձել են Է. Հարությունյանը, Ա. Լերիսհամյանը, Է. Աթայանը, Գ. Գևորգյանը, Գ. Շաքարյանը, Կ. Միրումյանը, Ա. Դովսեփյանը:

21. Տե՛ս Панарин А. С., Полотология. М., ООО, Проспект-Х, 1999, էջ 238-242:

նալ վարքագծից խուսափելը՝ հնարավորություն չտալով ամբողջական պատկերացում կազմել իրական գործընթացների մասին: Թեև «շատ գիտնականներ, այդ թվում նաև Լ. Միգելը, կարծում են, որ «գոյություն չունի ո՛չ ճանաչողության իռացիոնալ եղանակ և ո՛չ էլ գիտություն՝ իռացիոնալության մասին»²², այնուամենայնիվ, նրանք չեն ժխտում կենսագործունեության իռացիոնալ վարքագծով պայմանավորված հասարակական-տնտեսական կյանքի պարադոքսները²³, ինչն առավել ցայտուն ձևով իր դրսևորումն է ստացել հասարակական տրանսֆորմացիոն գործընթացներում: Այստեղ ավելի քան պարադոքսալ է իռացիոնալի գնահատման խնդիրը՝ ժամանակի և տարածության գործոնների ներքո, երբ մշակութային, սոցիալական, տարածաշրջանային և միջազգային ինտեգրման բարդ գործընթացներն արտահայտում են բավարարվածության տարբեր մակարդակներ, ինչով էլ պայմանավորված տեղի է ունենում արժեչափերի անընդհատ փոփոխություն: Այս տեսակետից, իսկապես դժվար է գտնել չափման այն համակարգը, որը հնարավորություն կտա գնահատել իռացիոնալը և, հետևաբար, հասարակական զարգացումը: Ասվածն էլ ավելի է բարկունում աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական արդի բարդ իրավիճակում, երբ մուտքային ու ելքային՝ անընդհատ և շատ արագ տեղի ունեցող փոփոխությունների ներքո դժվարանում է իրավիճակի ճիշտ գնահատումը և համապատասխան եզրակացություններ կատարելը: Մի բան, այնուամենայնիվ, ակնհայտ է. հասարակական զարգացման ողջ ճանապարհին՝ ռացիոնալի և իռացիոնալի միաժամանակյա և իրար հաջորդող գոյության ընթացքում՝ դրանց հակասության և պայքարի միջոցով է բացահայտվում լավը և վատը, խթանը և խոչընդոտը: Այս տեսակետից, հասարակական զարգացման ճանապարհին կարևորը ոչ թե իռացիոնալի ժխտումն է, այլ՝ իռացիոնալության սահմանների որոշումը և, իռացիոնալ հնարավորինս հաշվառման միջոցով, ռացիոնալի ազդեցության գերակայության ապահովումը:

Չաշվի առնելով, որ հասարակական-տնտեսական արդյունավետ զարգացումը ենթադրում է անընդհատ վերափոխումներ, կարևոր է, որ տրանսֆորմացիոն նոր խնդիրների ծագման ու դրանց լուծման համար ծավալած գործունեությունը նույնպես անընդհատ վերանայվի: Ելնելով ասվածից՝ փորձենք տրանսֆորմացիոն խնդիրների օբյեկտիվ բացահայտման միջոցով գտնել Չայաստանում ամպա վիճակի հաղթահարման ուղիները: Այս տեսակետից, առաջնային է հոգևոր առաջնայնությունների՝ մշակույթի, գիտելիքի և մարդկային ներուժի որակական փոփոխությունների անհրաժեշտությունը: Ընդունելով, որ

²² Տե՛ս Мизес Л., Человеческая деятельность: Трактат по экономической теории, Челябинск, «Социум», 2005, էջ 87:

²³ Հասարակական և տնտեսական զրականության մեջ առկա են բազմաթիվ աշխատություններ, որոնցում փորձ է արվում որոշակիորեն գնահատելի և չափելի դարձնել այդ երևույթները, բայց դրանց շուրջ կարծիքների բազմազանությունը հանգեցնում է նոր հակասականությունների և հնարավորություն չի տալիս այդ հարցերի շուրջ գալ որոշակիության: Միակ եզրահանգումը, որին հնարավոր է գալ, դա այն, որ հասարակական ու տնտեսական գործունեության մեջ իռացիոնալն ակնհայտորեն կա և անհրաժեշտ է դրա ճանաչողության և, համապատասխան մեխանիզմների կիրառման միջոցով փորձել հաշվի առնել իռացիոնալի ազդեցությունը: Այս հիմնախնդիրների անդրադարձել են արևմտյան և ռուսական բազմաթիվ գիտնականներ՝ Միգել Լ., Սորոս Զ., Վեբլեն Թ., Վեբեր Ս., Ֆուկույամա Ֆ., Խաբերմանս Զու., Սարկուզ Գ., Խոման Կ., Պոպեր Կ., Սուխարյով Օ., Գայդենկո Պ., Դավիդով Զու.: Չայ գիտական իրականության մեջ ռացիոնալի և իռացիոնալի տեսա-կիրառական խնդիրներին լուրջ բազմաթիվ ուսումնասիրություններ ունի Գ. Աղաջանյանը, որտեղ բավական խորքային անդրադարձ է կատարվել հասարակական-տնտեսական գործընթացներում ռացիոնալի և իռացիոնալի փոխհարաբերությունների ու դրանց սահմաններին:

դրանցից ոչ մեկն ի գորու չէ առանձին լուծելու տվյալ փուլում առկա խնդիրները, նպատակահարմար է դրանց ամբողջական և, որ շատ կարևոր է, միաժամանակյա որակական վերափոխում, որտեղ *հասարակական զարգացման գերակայությունը՝ պետք է դիտարկել որպես ելակետ*: Եթե տնտեսական զարգացումը կարելի է դիտարկել որպես հասարակական-տնտեսական զարգացման ու երկրի առաջընթացի անհրաժեշտ պայման, ապա հասարակական զարգացումն այդ ամենի իրագործման այն բավարար պայմանն է, որն իսկապես կապահովի այդ զարգացումը: Հասարակական զարգացումն էլ, իր հերթին, ամմիջականորեն ածանցյալ է տվյալ հասարակության քաղաքակրթական մակարդակից, ինչը դրսևորվում է մշակութային, քաղաքական, տնտեսական արժեհամակարգային չափորոշիչների մշակման ու իրացման անհրաժեշտ պայմանների և դրանցից բխող ինստիտուցիոնալ ու կառուցվածքային հենքի ապահովման միջոցով՝ ռացիոնալ վարքագծի հիման վրա:

Սա, իհարկե, բարդ գործընթաց է, այնուամենայնիվ, թեկուզ ամենաընդհանուր գնահատումներով, անհրաժեշտ է ճշգրտել այդ չափորոշիչները: Խնդիրն էլ ավելի է բարդանում, պայմանավորված հասարակության անդամների հոգևոր ընկալման առանձնահատկություններով, ինչը կարող է հանգեցնել չափորոշիչների կանխորոշվածության /սուբյեկտիվիզմի/ և դժվարացնել խնդրի օբյեկտիվ լուծումը: Նման իրավիճակը շատ օրինաչափ է հայերի համար՝ պայմանավորված մեր հավաքականության անդամների ծայրահեղ անհատականացվածությամբ և քաղաքակրթական մակարդակի ոչ համարժեք ընկալման և դրա գնահատման բոլոր ցուցանիշների արտահայտված կանխորոշվածությամբ: Այստեղ ծայրահեղ կարևոր է դառնում գաղափարախոսական հենքի հստակեցման, արժեհամակարգի որոշակիության, սոցիալ-հոգեբանական ճիշտ ազդակների ձևավորման խնդիրը՝ որպես տնտեսական ու հասարակական հետագա զարգացման կողմնորոշիչներ: Ավելին, այստեղ գործում է փակ շրջայի սկզբունքը, քանի որ տնտեսական համակարգի վարքագիծը, լինելով ածանցյալ դիտարկված երեք գործոններից, հասարակական զարգացումների ընթացքում ձեռք բերելով հարաբերական ինքնուրույնություն՝ հետադարձ կապով ազդում է դրանց վրա²⁴:

Համաշխարհային զարգացումների արդի փոփոխությունների շրջանակներում լուրջ տեղ է զբաղեցնում հասարակական փոփոխումն ապահովող ինստիտուտների արագ զարգացման փաստը, ինչը դրսևորվում է պետություն-հասարակություն փոխհարաբերություններում՝ *հասարակության յուրաքանչյուր անդամի՝ որպես սոցիալ-քաղաքական գործընկերոջ սկզբունքի գերակայությամբ*: Սոցիալ-քաղաքական գործընկերոջ սկզբունքի վրա հիմնված *հասարակական փոխ-համաձայնությունը պետք է դառնա պետությունների ներքին քաղաքականության գաղափարախոսական հենքը, որտեղ կարևոր սկզբունքներից է հասարակական շահի նկատմամբ անհատի շահի գերակայությունը*²⁵: Սա նշանակում է, որ հասարակության զարգացումը որոշվում է ոչ թե՛ նյութական ռեսուրսներով, այլ մարդկային ռեսուրսով, ինչն էլ նշանակում է *մրա ֆիզիկական, հոգևոր, մշակութային, կրթական զարգացվածության ապահովում*:

²⁴ Աղաջանյան Գ., Պետությունը և տնտեսությունը, Եր., Տնտեսագետ, 2004, էջ 120:

²⁵ Նոր պարտիզմը սկիզբ է առնում «անհատ-հասարակություն» և «մարդ - բնություն» համակարգերի ներդաշնակ զարգացման անհրաժեշտությունից. անհատի շահերը բարձր են հասարակության շահերից /անզու-սաքսոնական տարբերակ/ և հասարակության շահերը բարձր են անհատի շահերից /եվրոպական տարբերակ/: Այս պահանջը ժամանակակից հասարակական-քաղաքական համակարգերի միտումների ձևավորման գլխավոր շարժիչ ուժն է և հասարակական մոդելի գլխավոր բնութագրիչը:

Համաշխարհայնացման գործընթացն առաջադրում է հասարակական զարգացման առավել հրատապ այնպիսի խնդիր, ինչպիսին է *ազգային հասունության մակարդակի* ռազմավարական նշանակության գիտակցումը, ինչն արտահայտվում է տարածաշրջանային ու գլոբալ գործընթացներում ազգի տեղի և դերի հստակ պատկերացման մեջ /*ազգային ինքնանույնականացում*։

Հասարակական-տնտեսական զարգացման արդի դրսևորումների ներքո օրակարգային է դարձել արժեքային նոր չափորոշիչների ու նոտեցումների ներդրման անհրաժեշտության խնդիրը։

Կա տեսակետ, որ հասարակական առաջընթացի պարտադիր պայմաններից մեկը *ժողովրդավարությունն* է։ Ժողովրդավարական կարևոր սկզբունքներից է *ժողովրդին՝ որպես իշխանության բարձրագույն կրող ճանաչելը*, և որպեսզի այն լիովին գործի, պարտադիր է կառուցվածքային համարժեք փոփոխություններ, մասնավորապես՝ արդյունավետ ժողովրդավարական ինստիտուտների ձևավորում։ *Հասարակության կողմից ճանաչվածությունը* նշանակում է, որ ժողովուրդը պետք է ընդունի իր իշխանությունն ու իրեն կառավարողներին և այն ամենը, ինչ իրականացվում է նրանց կողմից։ Դա ևս Հայաստանում, կարելի է ասել, պատշաճ մակարդակի վրա չէ։ *Քաղաքական և տնտեսական համակարգերի արդյունավետ համագործակցությունը* կախված է գաղափարախոսական ու արժեքային համակարգից, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական դրդապատճառներից։ Հետաքրքիր է, որ ինչպիսի կատարյալ չափանիշներ էլ որ ընդունվեն, պայմանավորված այս հարաբերություններում իռացիոնալ վարքագծի դրսևորումներով, հակասությունները դառնում են անխուսափելի։ Դիտարկված երևույթը գոյություն է ունեցել հասարակական զարգացման բոլոր ժամանակներում։ Հայաստանն այդ առումով բացառություն չէ։ Ավելին, այդ երևույթը Հայաստանում կրում է բավական խորքային բնույթ՝ իր ամենահակասական դրսևորումներով և ամենաբարդ հետևանքներով։ Այստեղ շատ կարևոր է քաղաքական և տնտեսական համակարգերի տարանջատման խնդիրը՝ դրանց միջև առողջ հակակշիռների ձևավորման ճանապարհով, որտեղ առանձնապես կրևորվում է արդյունավետ օրենքների ընդունման ու դրանց հետևողական ներդրման խնդիրը։

Հայաստանի հանրապետությունն այսօր գտնվում է արմատական վերափոխումների /գաղափարական, բարոյահոգեբանական, սոցիալ-տնտեսական ու կառուցվածքային-ինստիտուցիոնալ/ շարունակական գործընթացում։ Եվ եթե որոշ վերապահումներով կարելի է ասել, որ Հայաստանն իրավական առումով այլևս անցումային հասարակություն չէ /օրենսդրորեն արդեն իսկ ձևակերպված են նոր համակարգի ազգային-պետական կեցության հիմունքները/, ապա գործունեական տեսանկյունից, Հայաստանում դեռևս շարունակվում է անցումային կարգավիճակը, քանի դեռ իրավական հենքն ամբողջությամբ չի կիրարկվել և հասարակության գոյության ու գործառնության քաղաքական, բարոյահոգեբանական, սոցիալ-տնտեսական ու կառուցվածքային-ինստիտուցիոնալ տրանսֆորմացիաները շարունակվում են, ավելին՝ լիարժեքորեն չեն գործում ինքնավերարտադրության նոր մեխանիզմները։ Իրավիճակն ավելի է բարդանում, պայմանավորված այն հանգամանքով, որ Հայաստանում /թե՛ պետական, թե՛ հասարակական մակարդակներում/ դեռևս հստակ չէ ընկալվումը քաղաքակրթության ռացիոնալ պահանջները բավարարող այնպիսի չափորոշիչների նկատմամբ, ինչպիսիք են՝ *ժողովրդավարությունը, օրինականությունը, մարդու իրավունքները* և այլն, ինչը հրատապ է դարձնում

դրանց ճշգրտման և ազգային ու միջազգային չափորոշիչների համատեղման թույլատրելի սահմանների որոշման հարցը, ինչն էլ նշանակում է քաղաքակրթության զարգացման արդի միտումները դիտարկել *ազգային ինքնության ու գաղափարախոսության* համատեքստում՝ որպես հաջողության հասնելու կարևորագույն գրավական: Այստեղ անհրաժեշտ են լուրջ որակական փոփոխություններ՝ հասարակական-տնտեսական զարգացման բոլոր շերտերում և բոլոր մակարդակներում:

Աշխատանքի հինգերորդ **«Հասարակական-տնտեսական կառավարման հիմնախնդիրները և արդի մոտեցումները Հայաստանում»** գլխում բազմակողմանիորեն ուսումնասիրվել է Հայաստանի հասարակական-տնտեսական արդի զարգացման պայմաններում *կառավարման ազգային հայեցակարգի* մշակման և ներդրման խնդիրը: Սա նշանակում է և՛ տեսական, և՛ գործնական լուրջ հիմքերի ապահովում:

Կառավարումը հասարակական-տնտեսական արդյունավետ զարգացման կարևորագույն ռեսուրս է: Ըստ Դրուկերի՝ հասարակական-տնտեսական զարգացման հաջողությունների 80%-ը պայմանավորված է ոչ թե բնական ռեսուրսներով և տեխնոլոգիաներով, այլ՝ արդյունավետ կառավարմամբ²⁶:

Արդյունավետ կառավարման տեսակետից շատ կարևոր է ոչ միայն կառավարման գործընթացը պայմանավորող գործոնների դերը, այլ նաև կառավարման օբյեկտ-սուբյեկտների փոխազդեցության համարժեք մեխանիզմի առկայություն, ինչով էլ հենց պայմանավորվում է ցանկացած կառավարվող սուբյեկտի կառավարելիության մակարդակը: Այս տեսակետից կարևորվում են ոչ միայն կառավարման գործընթացում կառավարվող սուբյեկտի հետ գործունե հետադարձ կապի ապահովման ու հասարակական վերահսկման, այսինքն՝ երկրի զարգացմանն ուղղված գործընթացները ճիշտ գնահատման տեսանկյունից, այլ նաև՝ երկրի զարգացման գործընթացի մեջ հանրությանը ներգրավելու ճանապարհով, նրանց հետ *պատասխանատվությունը*: Ասվածը նշանակում է, որ *կառավարիչների ու կառավարվողների հարաբերություններում ձևավորված միանգամայն նոր իրավիճակն առաջիններից պահանջում է առավելագույն ուշադրություն՝ ընդունվող որոշումների որակի նկատմամբ, կառավարվողների համար առավել թափանցիկ, ընդունելի ու մատչելի լինելու տեսանկյունից, իսկ վերջիններից էլ պահանջում է կրթվածության ու տեղեկացվածության բավարար մակարդակ՝ այդ գործընթացների վրա առավելագույն չափով նպատակային ներգործելու համար*: Սա էլ իր հերթին նշանակում է պետություն-հասարակություն արդյունավետ փոխհամագործակցություն: Այստեղ *կարևորվում է կառավարման երկու աչքի» սկզբունքը*: Այս սկզբունքի ներդրումը, ի թիվս այլ կարևոր խնդիրների, առանձնահատուկ կարևորում է մարդու՝ որպես հասարակության անդամի դերը, մարդու՝ որպես կառավարման համակարգի առանցքային բաղադրիչի դերը, մարդ-կառավարիչի դերը: Այս տեսակետից կարևորվում է ոչ միայն հասարակության կրթվածության մակարդակի ու տեղեկացվածության բարձրացման, այլ նաև՝ երկրում կառավարման ոլորտի բարձր որակի մասնագետների պատրաստման և այդ նպատակով համապատասխան ինստիտուտների ձևավորման խնդիրը: Այս տեսակետից առանձնապես կարևոր է *կառավարչական մշակույթին* տիրապետելն ու դրա լայն կիրառումը: Այստեղ

²⁶ *Տե՛ս Դրուքեր Մ., Новые реальности в правительстве и политике, в экономике и бизнесе, в обществе и мировоззрении. М., ВлаДар, 1994, էջ 95:*

հավասարապես կարևորվում են կառավարման և՛ վարչարարական մշակույթի, և՛ մտավոր մշակույթի դերը՝ որպես կառավարչական մշակույթի հզորացման և կառավարման արդյունավետության բարձրացման լրջագույն հենք: Սա նշանակում է, որ *անցումը հասարակական զարգացման որակական նոր մակարդակի ու նոր մարդու ձևավորումն անհրաժեշտ է դիտարկել որպես հասարակական-տնտեսական կառավարման կարևոր գերակայություն:* Միայն նման մոտեցման դեպքում պետություն-հասարակություն և պետություն-տնտեսություն փոխհամագործակցությունը կարող է դառնալ լուրջ նախադրյալ՝ զարգացման առավել արդյունավետ հետագծի անցնելու և ամենառաջիոճալ ուղիով այդ նպատակին հասնելու համար:

Հայաստանում, ինչպես և ամբողջ հետխորհրդային երկրներում, դեռևս չի ձևավորվել կառավարման կայուն համակարգ՝ պայմանավորված այնպիսի երևույթներով, ինչպիսիք են քաղաքական հատվածի գերակայությունը տնտեսականի նկատմամբ, ժողովրդավարության թերզարգացվածությունը, գործազրկության ու կոռուպցիայի բարձր մակարդակները, վերահսկման մեխանիզմների անարդյունավետությունը, ինչպես նաև հասարակության գրագիտության ու կրթվածության ոչ համարժեք մակարդակը և այլն:

Այստեղ օգտակար կարող է լինել կառավարման միջազգայնորեն փորձարկված հիմնական մոդելների դիտարկումը՝ դրանցում առանձնացնելով մեր երկրին բնորոշ դրսևորումները.

-կառավարման սոցիոտնտեսական մոդելը ենթադրում է, որ պետության հզորությունը գտնվում է ուղղակի կախվածության մեջ տնտեսական աճից ու սոցիալական արդիականացումից /հայաստանյան կառավարման տրամաբանությունն ինչ-որ տեղ զուգահեռվում է այս մոտեցմանը/,

-կառավարման մշակութա-արժեքային մոդելը հիմնված է ազգային մշակութային ու արժեհամակարգային առանձնահատկությունների վրա /լայնորեն կիրառվում է Ճապոնիայում և Եվրոպական պետություններում/,

-կուսակցական-կառավարչական մոդելը ենթադրում է կառավարության գործունեության վրա կուսակցական վերահսկողություն՝ որպես պետական կառավարման գործիք /արմատավորված է ԱՄՆ-ում ու Մեծ Բրիտանիայում/ /հայաստանյան հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրողության մեջ նույնպես այս մոտեցումն ունի հստակ ազդեցություն/,

-կառավարման «նեոկորպորատիվ» մոդելը ենթադրում է պետական և մասնավոր շահերի փոխհամաձայնեցում /Հայաստանում այս ուղղությամբ փորձերը նույնպես բավական ակտիվ են եղել, այլ խնդիր է, թե որքանով են դրանք հաջողվել/,

-կառավարման ինստիտուցիոնալ-քաղաքական մոդելը պետության և նրա ինստիտուտների ակտիվ փոխգործունեությունը դիտարկում է որպես կառավարման հենք. հաշվի առնելով, որ կառավարման համակարգերը բնութագրվում են որոշակի պահպանողականությամբ, իսկ կառավարվող օբյեկտները, ընդհակառակը, գտնվում են անընդհատ զարգացման մեջ, ժամանակի ընթացքում նրանց փոխհարաբերություններում ծագում են հակասություններ, իսկ զարգացումը կրում է հատվածային բնույթ /սա նույնպես տեղ է գտել Հայաստանի պետական կառավարման համակարգում/:

Ամփոփելով այս փոքրիկ վերլուծությունը, կարելի է ասել, որ Հայաստանի հետանցումային կառավարման փորձն իրենից ներկայացնում է բավական խառը, անընդհատ փնտրտուքի գործընթաց, որտեղ պարբերաբար տեղ են գտել

կառավարման դիտարկված մոդելներից յուրաքանչյուրին բնորոշ, երբեմն՝ խիստ հակասական, հատվածային տարբեր բաղադրիչներ:

Հիմք ընդունելով կատարված դիտարկումները, ինչպես նաև հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգի զարգացումները պետք է համահունչ լինեն հասարակական-տնտեսական արդի զարգացումներին ու կառավարչական գործունեության, ինչպես նաև կորպորատիվ էթիկայի վերափոխումների ժամանակակից միտումներին, կառավարումը պետք է *հիմնված լինի ազգային մշակութային ու արժեհամակարգային առանձնահատկությունների վրա*, որտեղ որպես *հիմնական ռեսուրս հանդես է գալիս մարդը*՝ իր մտածելու կարողությամբ ու կրթվածությամբ, *որպես շարժիչ ուժ՝ գիտելիքի անընդհատ զարգացումը*: Այս տեսակետից կարելի է ասել, որ մեր երկրի կառավարման ազգային հայեցակարգն այսօր ավելի համահունչ է սոցիալ-մշակութային մոդելի տրամաբանությանը: Կառավարման այս մոդելի հիմքում չկա հաջողության հասնելու որևէ գաղտնիք, ավելին, ինչպես կասեր Ակիո Մորիտան, որևէ տեսություն, ծրագիր կամ պետական քաղաքականություն չի կարող հաջողություն բերել այնպես, ինչպես դա կարող է անել մարդը²⁷: Ասվածի մասին է վկայում նաև, Համաշխարհային բանկի տվյալներով՝ ազգային հարստության միայն 16 %-ն է կազմում արտադրական բաղադրիչը, մնացած մասը կազմում է մարդկային ռեսուրսը՝ օժտված կրթական ու մշակութային լուրջ ներուժով: Հաշվի առնելով, որ Հայաստանն ունի լուրջ մարդկային ու մտավոր ներուժ, ինչպես նաև դարերի խորքից եկող ազգային ավանդույթների մեծ շտեմարան, կառավարման սոցիո-մշակութային մոդելը կարող է արդյունավետ գործել հայաստանյան արդի իրողության մեջ:

Չետճգնաժամային արդի մարտահրավերների հաղթահարման ճանապարհին կառուցվածքային վերափոխումների ռազմավարական ուղեմիչերի և գերակայությունների հստակեցման անհրաժեշտությունը դարձել է ժամանակի կարևորագույն հրամայականներից մեկը: Կառուցվածքային քաղաքականությունը կարող է սկսվել ազգային արժեհամակարգի ու հասարակական-տնտեսական զարգացման գաղափարախոսական հենքի արդիականացման խնդիրներից և ավարտվել այդ վերափոխումներին համահունչ՝ գործունային, արտադրատնտեսական, ճյուղային, տարածքային համարժեք փոփոխությունների ապահովման խնդիրներով:

Չետանցումային շրջանում Հայաստանում կառուցվածքային քաղաքականությունն ինչ-որ տեղ կրում էր ինքնաբերական բնույթ: Պետությունը կառուցվածքային քաղաքականությունը սկսց կարևորել միայն ճգնաժամային զարգացումների ներքո, ինչը, սակայն բավարար խորությամբ չի իրականացվում, լիարժեք չեն նաև տնտեսության կառուցվածքային զարգացման գերակայությունների, դրանց կենսագործման մեխանիզմների հստակեցումը:

Կառուցվածքային վերափոխումների պետական քաղաքականության հայեցակարգային դրույթները պետք է բխեն Հայաստանում հասարակական-տնտեսական զարգացման տրամաբանությունից՝ որպես հենք դիտարկելով անցումը զարգացման հոգևոր առաջնայնությունների: Այս տեսակետից լուրջ կառուցվածքային փոփոխություններ են անհրաժեշտ մշակութի, գիտելիքի ու

²⁷.Morita A., Сделано в Японии, М., Альпина Паблишер, 2007, с. 39

մարդկային կապիտալի ոլորտներում՝ նպատակ դնելով առավելագույնս նպաստել դրանցից յուրաքանչյուրի ներդրումային ներուժի մեծացմանը և համընդհանուր առաջընթացին: Հաշվի առնելով, որ ազգային կառավարման արդյունավետությունն, առաջին հերթին, որոշվում է ազգի ինքնակազմակերպման առավել ամբողջական կառուցվածքով, առանձնապես կարևորվում են կառուցվածքային փոփոխությունները հասարակության ինքնակազմակերպման մակարդակում և այն ապահովող կառույցներում: Այստեղ որպես ամբողջականության չափանիշ է հանդիսանում նպատակային զարգացմանն ուղղված կոնկրետ գործառույթների համալիր իրագործումը: Այս տեսակետից նպատակահարմար է, ելնելով գործառույթների հստակ բովանդակային առանձնահատկություններից, ձևավորել այդ գործառույթների իրագործմանն ուղղված կառուցվածքային համարժեք ենթահամակարգեր:

Հոգևոր-մշակութային զարգացման ենթահամակարգ՝ ուղղված ազգային մտածողության ու ինքնանույնականացման ձևավորմանը, ինչպես նաև համարդկային քաղաքակրթության մեջ մեր ժողովրդի դերի գիտակցմանը: Այստեղ հենքային կարող են դառնալ.

- պատմության, ազգագրության, մշակութային, հոգեբանության, իրավունքի ու սոցիոլոգիայի և այլ ազգային ու միջազգային կառույցները՝ որպես իրավական և գաղափարախոսական անվտանգության հենք
- հասարակական զարգացման կառույցները, որոնց գործոնելությունն առընչվում է պետական կառավարման համակարգերին, տարածաշրջանային զարգացմանը՝ որպես տնտեսական ու կազմակերպչական անվտանգության հենք
- նազնավարական հետազոտությունների կառույցը /աշխարհաքաղաքական հետազոտություններ, ռազմական դոկտրին, միջազգային համագործակցություն և միջազգային իրավունք/՝ որպես արտաքին քաղաքական ու պաշտպանական անվտանգության հենք:

Հասարակական փոխհամաձայնության և հասարակություն-պետություն համագործակցության ապահովման ենթահամակարգ, ինչն առավել ցայտուն է դրսևորվում կառավարման սոցիալ-մշակութային սկզբունքի ներքո. կառավարչական որոշումներն արդյունավետ են լինում այն դեպքում, երբ հասարակությունը գիտակցում և կիսում է դրանց իմաստը և մասնակցում այդ որոշումների կայացման գործընթացին՝ երկխոսության միջոցով ապահովելով շահագրգիռ կողմերի փոխհամաձայնություն: Մեր երկրում նման առաքելությամբ կարող է հանդես գալ ՀՀ հանրային խորհուրդը՝ համապատասխան կանոնադրական և կառուցվածքային փոփոխություններից հետո:

Հասարակական-տնտեսական ռազմավարական զարգացման ենթահամակարգ, որի կարևորությունը պայմանավորված է կառավարման համակարգում ռազմավարական ու ընթացիկ կառավարման մակարդակների հստակ տարանջատման ամիրաժեշտությամբ, որպես հայեցակարգային մոտեցում՝ երկարաժամկետ զարգացման հիմքում դիտարկելով մարդկային կապիտալը, մշակույթը և գիտելիքը: Այստեղ կարևոր է նաև՝ որպես ռազմավարական պլանավորման կարևոր խնդիր, դիտարկել ինստիտուցիոնալ բարեփոխումները: Սովորաբար, նման գործառույթներն իրագործվում են պետական կառավարման մարմնի կողմից հատուկ ստեղծված կառույցների միջոցով: Այստեղ առանձնակի կարևոր դեր կարող է ունենալ Ազգային անվտանգության խորհուրդը:

Հասարակական-տնտեսական կառավարման դիտարկված կառուցվածքային վերափոխումների առաջարկն առանձնապես կարևորվում է հասարակական

ինքնակազմակերպման ու զարգացման խնդիրների համատեքստում՝ որպես հասարակական-տնտեսական առաջընթաց զարգացման կարևոր երաշխիք:

Եզրակացություններ

Ատենախոսությունը նվիրված է հասարակական-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրներին: Առանձնակի կարևորվել են հասարակական-տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման խնդիրները՝ որպես որակապես նոր վերելքի գրավական:

Ատենախոսության հիմնադրույթները որոշ ընդհանրացումներով ներկայացված են հետազոտության հետևյալ եզրահանգումներում ու առաջարկություններում.

1. Ուսումնասիրելով անցումային երկրների, այդ թվում Հայաստանի տնտեսական զարգացման միտումները, բացահայտվել են տնտեսական աճի և նախաճգնաժամային զարգացման առանձնահատկությունները.

-Շուկային անցման սկզբնական փուլում արձանագրելով տնտեսական կտրուկ անկում, 2000 թվականից սկսված արագացող աճը՝ շարունակվեց մինչև տնտեսական զարգացման նախաանցումային մակարդակ: Այդ աճն ուներ վերականգնողական բովանդակություն և, չնայած որոշ որակական դրսևորումների, այնուամենայնիվ կրում էր քանակական բնույթ և չէր նպաստում հասարակական-տնտեսական զարգացմանը, ինչը նշանակում էր, որ այլևս հրատապ էր դարձել նոր *որակական աճ ապահովելու խնդիրը*:

-Բուռն գլոբալ գործընթացների ներքո, միջազգային շուկային ոչ լիարժեք ինտեգրվածության պայմաններում, էլ ավելի էր խորացել զարգացող երկրների կախվածությունը զարգացած երկրներից: Զարգացած երկրները, որտեղ բնակվում է աշխարհի բնակչության 15.6 %-ը, ապահովում էին ՀՆԱ-ի 47%-ը և միջազգային առևտրի մոտ 50%-ը: Ստեղծված իրավիճակն էլ ավելի բարդացավ՝ արդի ֆինանսատնտեսական ճգնաժամի ներքո:

-Ճգնաժամն, ըստ էության, արդյունք էր նորագատական բուռն գլոբալ զարգացումների: Տնտեսության անմախաղեպ գլոբալացումը ենթադրում էր շուկաների գլոբալ պատասխանատվություն, մինչդեռ, ֆինանսական շուկաները՝ կենտրոնացվածության ու անվերահսկելիության պայմաններում, անշեղորեն գերազանցելով իրական հատվածը, դարձան անմախաղեպ՝ համընդգրկուն և սրընթաց, ճգնաժամի պատճառ:

2. Գնաժամը դիտարկելով որպես բացառիկ հնարավորություն՝ նոր ելքային պայմաններից բխող, որակապես նոր առաջընթացի համար, աշխատանքում հիմնավորվել է յուրաքանչյուր երկրի կոնկրետ իրավիճակից բխող համեմատական առավելությունների բացահայտման և դրանց արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը: Այստեղ հստակ դեր ու անելիքներ ունեն և՛ *պետությունը*, և՛ *հասարակությունը*:

3. Արդի, բավական բարդ, հետճգնաժամային զարգացումները հանգեցրել են երկրի հետագա զարգացման նոր ուղիների որոնումների անհրաժեշտության գիտակցմանը, այնպիսի ուղիների, որոնք կնպաստեին տնտեսության արդիականացմանը և այն առաջընթաց զարգացման հետագիծ տեղափոխմանը՝ հիմնված նոր մոտեցումների ու սկզբունքների, նոր ռեսուրսային ներուժի վրա: Անենառացիոնալ ուղիով այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է *շուկայի*

և պետության այնպիսի փոխհամագործակցություն, որտեղ պետական կարգավորումը կդառնա տնտեսական քաղաքականության ամենակարևոր գերակայությունը:

4. Ձարգացման նոր որակական հենքի վրա, պետության դերի կարևորման հետ միասին, խիստ արդիական է դառնում *հասարակության դերը և պետություն-հասարակություն արդյունավետ համագործակցությունը՝* որպես զարգացման ռազմավարության պարտադիր նախադրյալ: Դա հնարավորություն կտա, ըստ էության գնահատելով երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործընթացները և կայացրած որոշումները, զբաղեցնել հստակ դիրք՝ երկրում տեղ գտած գործընթացներում և երկխոսության ճանապարհով մասնակցել երկրի կայացման ու զարգացման գործին:

5. Ձարգացման արդիականացման փուլերի և տնտեսական քաղաքականության մեջ գոյություն ունի սերտ կապ: Այս տեսակետից շատ հետաքրքիր Ու. Ռոստոկի տնտեսական աճի փուլերի տեսությունը, համաձայն որի անցումը զարգացման մեկ փուլից մյուսին տեղի է ունենում բնականոն՝ ազգային ներուժի մոբիլիզացման և կատարելագործման ճանապարհով:

6. Հիմնավորելով ազգային գաղափարախոսական հենքի արդիականացման կարևորությունը՝ հասարակական-տնտեսական զարգացման արդի տեղաշարժերի ներքո, ներկայացվել են Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության հիմնական մոտեցումները: Մասնավորապես, հիմնավորվել է Հայաստանում *մոբիլիզացիոն տնտեսական քաղաքականության* անցնելու անհրաժեշտությունը՝ որպես ազգային ներդրումային ներուժի առավելագույնս բացահայտման և առավել արդյունավետ իրագործման զրավական:

7. Ներկայացվել է հասարակական-տնտեսական ներուժը՝ որպես ոչ նյութական և նյութական ռեսուրսների ամբողջություն, որտեղ կարևոր տեղ ունեն ինչպես մարդու հոգևոր կյանքը, ազգի արժեքային ու գաղափարախոսական հենքն ու հասարակության ինքնակազմակերպման ունակությունները, այնպես էլ կրթական, ենթակառուցվածքային, ինստիտուցիոնալ ներուժը, ֆինանսական ու բնական ռեսուրսները:

8. Հասարակական-տնտեսական ներուժի բաղադրիչների բազմակողմանի գնահատման միջոցով, ներկայացվել է դրանց տեղը ազգային ներդրումային ներուժի ձևավորման գործում, ինչպես նաև որոշվել են մեր երկրի զարգացման հիմնական գերակայությունները՝ *մարդկային ներուժի, գիտելիքի և մշակույթի ոլորտների զարգացումը* դիտարկելով որպես հենքային:

9. Ընդունելով, որ զարգացման հիմնական ազդակները ծագելով մշակույթում, այնուհետև, երկարաժամկետ հատվածում, ենթարկվելով փոփոխության՝ ազդում են ազգային մտածելակերպի վրա և վերածնակորում հասարակական - տնտեսական համակարգը, հիմնավորվել է *հավաքական մշակույթային կապիտալի*՝ որպես ազգի զարգացման ռազմավարության առանցքային տարրի, դերը և նշանակությունը:

10. Ձարգացման հոգևոր առաջնայնություններին անցման անհրաժեշտության մասին կարծիքները եղել են հասարակական-տնտեսական զարգացման համարյա բոլոր համակարգերի ժամանակ: Ուղղակի այն նոր հնչեղություն և նոր բովանդակություն է ստացել համաշխարհային գլոբալ գործընթացների և հետզհետեային վերջին զարգացումների ներքո:

11. Դիտարկելով Ու. Ռոստոուկի զարգացման հայեցակարգը հասարակական-տնտեսական արդի զարգացումների ներքո, Ռոստոուկի չորրորդ՝ բարձր զանգվածային սպառման փուլը նույնացվել է վերջին *ճախաճգնաժամային փուլի* հետ, որտեղ զարգացման հիմնական խթանը սպառման աննախադեպ աճն էր, իսկ եկամուտների ու ծախսերի անհավասարակշիռ զարգացումը՝ դրա հետևանքը և ճգնաժամի պատճառը; իսկ վերջին՝ կյանքի որակի փնտրման փուլը /առաջին պլան է մղվում մարդու հոգևոր, բարոյական, մշակութային, մտավոր զարգացումը/ նույնացվում է *հետճգնաժամային արդի վիճակի հետ*, որտեղ հասարակական զարգացման *հոգևոր առաջնայնությունների՝ մշակույթի, գիտելիքի և մարդկային ռեսուրսի զարգացման խնդիրը* դառնում են այն ելակետը, ինչից պետք է սկսել կյանքի որակի փոփոխությունը՝ որպես առաջընթաց զարգացման հիմնական երաշխիք:

12. Այսպիսով, կարելի է փաստել, որ հասարակության զարգացումը տեղի ունենալով տնտեսական զարգացման հենքի վրա և ապահովելով տարաբովանդակ որակական անցումներ՝ ի վերջո, հասնում է կյանքի որակի փնտրման նոր փուլի, *որտեղ առաջին պլան է մղվում ոչ թե տնտեսական գործունը, այլ մարդու, հետևաբար, հասարակության հոգևոր-մշակութային ու մտավոր զարգացումը:*

13. Հասարակական-տնտեսական զարգացումը դիտարկելով որպես անընդհատ վերափոխումների /տրանսֆորմացիաների/ գործընթաց, իսկ *տրանսֆորմացիոն խնդիրը՝* որպես անցումային հասարակությունների ուսումնասիրման ելակետ, ընդունելով նաև, որ տրանսֆորմացիոն խնդրի լուծումն անմիջականորեն կախված է մի կողմից տրանսֆորմացվող օբյեկտի ներքին դիմադրության հաղթահարումից, մյուս կողմից՝ տրանսֆորմացիոն գործընթացների մեջ համապատասխան ճշգրտումներից, կարևորվել է հասարակական-տնտեսական գործընթացներում ռացիոնալ-իրացիոնալի հարաբերակցության դիտարկումը՝ որպես «լավի» և «վատի» բացահայտման ուղի, որտեղ կարևորը *ոչ թե իռացիոնալի ժխտումն է, այլ՝ դրա հնարավորինս հաշվառման միջոցով, ռացիոնալի ազդեցության գերակայության ապահովումը:*

14. Հասարակության զարգացումը դիտարկելով որպես հասարակական-տնտեսական զարգացման *ելակետ*, կարևորվում է ազգային զարգացման հեռանկարին միտված հայեցակարգային բնութագրիչների առանձնացումը՝ *անհատի շահի գերակայությունը՝ հասարակական շահի նկատմամբ, հասարակության յուրաքանչյուր անդամի, որպես սոցիալ-քաղաքական գործընկերոջ, գերակայությունը, հասարակական համաձայնությունը, քաղաքական և տնտեսական համակարգերի արդյունավետ համագործակցությունը*, որտեղ հենքային են դառնում ժողովրդավարության , օրինակականության, թափանցիկության սկզբունքները:

15. Հասարակական - տնտեսական տրանսֆորմացիաների ներքո առանձնապես կարևորվում են *անցումային մեթոդներն ու մեխանիզմները*: Այստեղ առաջնահերթ կարևորվում է *կառավարման ազգային հայեցակարգի* դերը, որտեղ հենքային է *կառավարման «երկու աչքի» սկզբունքը՝* ի դեմս պետության և հասարակության: Այս տեսակետից կարևոր նշանակություն է ստանում *կառավարչական մշակույթն՝* իր վարչարարական և մտավոր բաղադրիչներով, որտեղ *վարչարարականն աստիճանաբար փոխարինվում է մտավորով*: Այստեղ էլ ավելի է կարևորում նոր մարդու ձևավորման և, այդ հենքի վրա, հասարակության զարգացման որակական նոր մակարդակի անցման խնդիրը: Հաշվի առնելով

ասվածը, ինչպես նաև հիմք ընդունելով հասարակակա-տնտեսական արդի զարգացումների ներքո հոգևոր առաջնայությունների կարևորությունը, հիմնավորվել է, որ Հայաստանի *կառավարման ազգային հայեցակարգը պետք է լինի սոցիալ-մշակութային*, ինչը պետք է բխի ազգային մշակութային ու արժեհամակարգային հենքից, որտեղ որպես զարգացման օբյեկտ և, միաժամանակ, դրա իրագործող պետք է հանդես գա մարդն՝ իր ստածելու կարողությամբ ու կրթվածությամբ, որպես շարժիչ ուժ գիտելիքի անընդհատ զարգացումը:

16. Հիմնավորելով ազգի ինքնակազմակերպման ամբողջական կառուցվածքի ձևավորման հրատապության հարցը, կարևորվել է կառուցվածքային փոփոխության անհրաժեշտությունը՝ հասարակական-տնտեսական զարգացման գաղափարախոսական մակարադակում, ինչն էլ հենց պայմանավորել է հետևյալ կառուցվածքային ենթահամակարգերի ձևավորման խնդիրը.

-հոգևոր-մշակութային զարգացման ենթահամակարգ՝ ուղղված ազգային մտածողության ու ինքնանույնականացման ձևավորմանը, ինչպես նաև համարողկային քաղաքակրթության մեջ մեր ժողովրդի դերի գիտակցմանը,

-հասարակական փոխհամաձայնության և հասարակություն-պետություն համագործակցության ապահովման ենթահամակարգ՝ ուղղված կառավարչական որոշումների կայացման գործընթացին հասարակության ներգրավմանը և, դրանով իսկ, այդ գործընթացների արդյունավետության բարձրացմանը,

-հասարակական-տնտեսական ռազմավարական զարգացման ենթահամակարգ՝ ուղղված ռազմավարական ու ընթացիկ կառավարման մակարդակների տարանջատմանը:

Հաշվի առնելով, որ հայ ժողովրդի դարերի ձեռքբերումները կարող են դառնալ ազգային գաղափարախոսության և արդյունավետ հասարակության ձևավորման լուրջ հենք, հիմնավորվել է ազգային ավանդական ռեսուրսների արդիականացման և դրանց նպատակային օգտագործման անհրաժեշտությունը, ինչն էլ ավելի ճշմարիտ է դառնում դարերի խորքից՝ ռացիոնալի ու իռացիոնալի անընդհատ պայքարի ճանապարհով, սրբագրված և հաջորդ սերունդներին մատուցված մնայունի ներքո: Այստեղ լուրջ անելիքներ ունեն ինչպես պետական, այնպես էլ հասարակական համակարգերը:

***Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակվել են հեղինակի
հետևյալ աշխատություններում***

1. Հասարակական-տնտեսական զարգացման արդի խնդիրները, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2012, էջ 199
2. Ֆինանսատնտեսական ճգնաժամը. հաղթահարման ուղիները և հետճգնաժամային զարգացումները, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2010, էջ 311
3. Модернизация сферы культуры как стратегической основы социально-экономического управления, Личность и культура, научный ж-л, Санкт-Петербург, 2013, с. /42-50/
4. Արդյունավետ կառավարումը որպես զարգացման հենք. արդի խնդիրները և մոտեցումները, ԵՊՀ, տնտեսագիտական ֆակուլտետ, Տարեգիրք, Երևան, 2013, էջ /113-125/
5. Կառուցվածքային քաղաքականության արդի խնդիրները և մոտեցումները, «Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի մարտահրավերները» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Գյումրի, «Դպիր» հրատարակություն, 2012, էջ /6-14/
6. Հասարակական-տնտեսական ներուժի գործոնային վերլուծությունը, «Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի մարտահրավերները» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Գյումրի, «Դպիր» հրատարակություն, 2012, էջ /119-126/
7. Задачи управления в кон тексте современных проявлениу социально-экономических отношениу, Тематический сборник: Актуальные вопросы практической психологии и социальных технологий, Балтийская педагогическая академия, Санкт-петербург, 2012, с. /113-117/
8. Հասարակական-տնտեսական զարգացման հոգևոր առաջնայնությունները՝ որպես Հայաստանի կայուն առաջընթացի երաշխիք, ԵՊՀ, տնտեսագիտական ֆակուլտետ, Տարեգիրք, Երևան, 2011, էջ /102-115/
9. Система ценностей как основа общественно-экономического Потенциала в свете современного развития, Сборник материалов XXI Международной научно-пракической конференции: Система ценностей современного общества, Новосибирск, 2011, с. /147-158/
10. Armenians Socioeconomic Potential in The Context of Post-Crisis Development, Central Asia and The Caucasus, Journal of social and political Studies, CA&CC Press, SWEDEN, Volume12, Issue1, 2011, էջ /87-101/
11. Ձեռնարկությունների զարգացման խնդիրները և մոտեցումները ճգնաժամի պայմաններում, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, Երևան, N 5, 2010, էջ 133-143
12. Ֆինանսատնտեսական ճգնաժամը, զարգացումը և հաղթահարման ուղիներն անցումային երկրներում, «Էկոնոմիկա»

- տնտեսական, հասարակական, մշակութային, վերլուծական հանդես N 1(13), 2010, էջ /26-34/
13. The Financial and Economic Crisis: Development and Ways to Overcom it in Transition Economies, Central Asia and The Caucasus, Central Asia and The Caucasus, Journal of social and political Studies, CA&CC Press, SWEDEN, Volume 11, Issue 1, 2010, էջ /97-107/
 14. Բարեփոխումների նոր ելակետային պայմանները և տնտեսության զարգացման խնդիրները Հայաստանում, «Էկոնոմիկա» տնտեսական, հասարակական, մշակութային, վերլուծական հանդես N 2(11), 2009, էջ /66-73/
 15. Հասարակություն-պետություն փոխհարաբերության շուրջ, «Անցման սոցիալական և ժողովրդագրական գինը» միջազգային գիտաժողով, Երևան, 2008, էջ /239-242/
 16. Զարգացած շուկայական տնտեսության ձևավորումը պահանջում է տարածություն և ժամանակ, «Անցման սոցիալական և ժողովրդագրական գինը» միջազգային գիտաժողով, Երևան, 2008, էջ /243-246/
 17. Բարեփոխումների նոր ելքային պայմանները և երկրի զարգացման ռազմավարական ու մարտավարական առաջնահերթությունները, «Անցման սոցիալական և ժողովրդագրական գինը» միջազգային գիտաժողով, Երևան, 2008, էջ /247-251/
 18. Необходимость формирования новой модели бизнес-школы в РА как стратегический фактор, стимулирующий развитие предпринимательской деятельности, Информационные технологии и управление, 2, 2008, с.169-176
 19. Вопросы подготовки и переподготовки кадров в контексте развития предпренемательской деятельности в Армении, «Ֆինանսներ և էկոնոմիկա Հայաստան» ամսագիր, թիվ 6, մայիս 2006թ., էջ /183-185/
 20. Բարեփոխումները տնտեսության միկրոմակարդակում. առանձնահատկությունները և հիմնախնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ՖԷՆ, 2005թ., էջ /22-28/
 21. Անցումային երկրների ֆինանսական շուկաները և տնտեսական աճը, Ֆինանսներ և էկոնոմիկա. Հայաստան» ամսագիր, թիվ 10-11, 2004թ., էջ /18-22/
 22. Արժեթղթերի շուկան և տնտեսական զարգացումը, Ֆինանսներ և էկոնոմիկա. Հայաստան, թիվ 5, հոկտեմբեր, 2001թ., էջ /48-51/
 23. Проблема вхождения Армении во Всемирную торговую организацию (ВТО)., Общественно-политический журнал 6 (18) “Центральная Азия и Кавказ”, Швеция, 2001г., էջ /193-199/

Сарибебян Амаля Сарибековна

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕСТВЕННО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ И КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ ИХ РЕШЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук по специальности: 08.00.02 - "Экономика, управление хозяйством и его отраслями".

Защита диссертации состоится 02 июля 2013 года в 13.30 на заседании Специализированного совета 015 по экономике, действующего в Ереванском Государственном Университете, по адресу 0009, Ереван, ул. Абовяна 52.

Резюме

Диссертация посвящена современным проблемам общественно-экономического развития. Особую важность приобрели задачи эффективного использования общественно-экономического потенциала как гарантии качественно нового прогресса.

Основные результаты и научная новизна диссертации сводятся к следующему:

1. В процессе исследования тенденций экономического развития переходных стран, в том числе Армении, выявлены особенности экономического роста и предкризисного развития. Кризис, в сущности, был результатом неолиберальных бурных глобальных развитий.
2. Рассматривая кризис как исключительную возможность качественно нового прогресса, в работе обосновалась необходимость выявления относительных преимуществ стран и их эффективного использования.
3. Современное, довольно сложное, посткризисное развитие привело к осознанию необходимости поиска новых путей для дальнейшего развития страны, которые способствуют модернизации экономики и ее прогрессивного развития, основанного на новом ресурсном потенциале, новых подходах и принципах. Для достижения вышеставленной цели необходимо такое взаимодействие рынка и государства, где *государственное регулирование станет важнейшим приоритетом экономической политики.*
4. На основе качественно нового развития, актуальным становится роль общества, а также эффективное взаимодействие государства и общества как обязательная предпосылка стратегического развития.
5. Существует тесная связь между этапами модернизации развития и экономической политикой. С этой точки зрения интересна теория этапов экономического роста У. Ростоу, согласно которой переход с одного этапа развития на другой происходит путем мобилизации и совершенствования национального потенциала.
6. Обосновывая важность модернизации национальной идеологической основы в условиях современного передвижения общественно-экономического развития, в диссертации аргументируется переход к политике мобилизационной экономики в Армении как залог максимального выявления и реализации национального инвестиционного потенциала.
7. Общественно-экономический потенциал представлен как совокупность нематериальных и материальных ресурсов, где важное значение имеют как духовная жизнь человека, система ценностей и идеологическая основа нации, самоорганизационные способности общества, так и образование, инфраструктура и институциональная основа, финансовые и природные ресурсы.
8. Путем многосторонней оценки составляющих общественно-экономического потенциала, представлена их роль в формировании национального инвестиционного потенциала, также определены основные приоритеты развития нашей страны, рассматривая развитие человеческого потенциала, науки и культуры как базовые.
9. Принимая во внимание тот факт, что основные импульсы развития, возникающие в культуре, в долгосрочный период подвергаясь изменениям, воздействуют на

национальное мышление и преобразовывают общественно-экономическую систему, обоснованы роль и значение капитала совокупной культуры как аксиального составляющего стратегии развития нации.

10. Рассматривая концепты развития У. Ростоу в контексте нынешних общественно-экономических условий, выявлена тождественность четвертого этапа Ростоу (этап высокого массового потребления) с последним предкризисным этапом, где беспрецедентный рост потребления стал основным стимулом развития, а несбалансированное развитие доходов и расходов – его последствием и причиной кризиса. Последний этап Ростоу (этап поиска качества жизни, где на первый план выдвигается духовное, моральное, культурное, интеллектуальное развитие человека) отождествляется с нынешним посткризисным этапом, где задача общественного развития духовных приоритетов – культуры, науки и человеческих ресурсов – становится исходным для изменения качества жизни и прогрессивного развития.

11. Таким образом, развитие общества, происходящее на основе экономического развития и обеспечивающее разнородные качественные переходы, наконец достигает нового этапа поиска качества жизни, где на первый план выдвигается не экономический фактор, а духовно-культурное и интеллектуальное развитие человека и общества.

12. Рассматривая общественно-экономическое развитие как непрерывный трансформационный процесс, а также принимая, что решения трансформационных задач непосредственно зависят, с одной стороны, от преодоления внутреннего сопротивления трансформируемого объекта, с другой стороны, от соответствующих коррекций в трансформационных процессах, в работе приобрели важность исследование отношений рационального и иррационального в контексте общественно-экономических процессов. Здесь важно не отрицание иррационального, а обеспечение приоритетного воздействия рационального.

13. Рассматривая общественное развитие как исходное для общественно-экономического развития, важным становится выделение концептуальных характеристик долгосрочного национального развития, в частности, приоритет интересов индивида над общественным интересом, общественное согласие, эффективное сотрудничество политических и экономических систем на основе принципов демократии, законности и прозрачности.

14. В условиях общественно-экономических трансформаций особую важность приобретают переходные методы и механизмы. Здесь первостепенным становится роль концепции национального управления, где базовым является принцип управления «два глаза» в лице государства и общества. С этой точки зрения большое значение приобретает управленческая культура с административным и интеллектуальным составляющими, где административная составляющая постепенно заменяется интеллектуальной. Дается обоснование тому, что национальный концепт управления в Армении должен быть социально-культурным, основанным на национальной культурно-идеологической системе, где в качестве объекта развития и одновременно реализатора данного концепта выступит образованный человек, способный мыслить, а в качестве движущей силы – непрерывное развитие науки.

15. Принимая во внимание важность вопроса совокупной структуры самоорганизации нации, дается обоснование необходимости структурных изменений в форме следующих подсистемных структур:

подсистема духовно-культурного развития, направленная на формирование национального мышления и самоидентификации, а также сознания роли нашего народа в человеческой цивилизации;

подсистема обеспечения общественного взаимопонимания и общественно-государственного сотрудничества, нацеленная на вовлечение общества в процессе принятия управленческих решений и таким образом повышение эффективности этих процессов;

подсистема общественно-экономического стратегического развития, направленная на отъединение стратегических и текущих управленческих уровней.

Amalya Saribekyan

MODERN PROBLEMS OF SOCIAL ECONOMIC DEVELOPMENT AND CONCEPTUAL APPROACHES TO THEIR OVERCOMING IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract on dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Economics in the Field of “Economics, Management of Economy and its Sectors” 08.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.30 on July 2013, at the Meeting of Specialized Council 015 of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan St., Yerevan, 0009, Armenia.

RESUME

The dissertation is devoted to the modern problems of social economic development. The tasks of the effective usage of social economic potential as a guarantee of qualitatively new progress have assumed particular importance.

The main results and scientific novelty of the work bring forth as follows:

1. While analyzing the trends of economic development in transition countries, including Armenia, the peculiarities of economic growth and pre-crisis development are revealed. Crisis, in effect, was the result of neoliberal turbulent global development.
2. Considering crisis as a unique opportunity of qualitatively new progress in conformity with new initial conditions, the necessity of revealing relative advantages of countries and their effective usage is settled down in the paper.
3. Modern, rather complex post crisis development has brought to the acknowledgement of the necessity to search new ways for further development of the country, which contributes to economic modernization and its progressive development, based on new resource material, new approaches and principles. For achieving the above-mentioned aim it is necessary to have such an interaction between the state and the market, where state regulation will become the most important priority of economic policy.
4. On the basis of qualitatively new development the role of the society becomes actual. The effective interaction of the state and the society as an obligatory precondition also becomes essential.
5. There exists tight connection between the phases of development modernization and economic policy. From this point of view, the theory of phases of economic growth by W. Rostow becomes interesting. According to it, the transition from one phase to another takes place through mobilization and improving national potential.
6. Justifying the importance of modernization of national ideological basis under the circumstances of modern movement of social economic development, the dissertation paper presents the necessity of the transition to the mobilized economics as a guarantee of maximal revelation and realization of national investment potential is grounded.
7. Social economic potential is presented as a totality of non-material and material resources, where both spiritual human life, the system of values, ideological basis of a nation, self organizational abilities of the society and education, infrastructure, institutional basis, financial and natural resources are of considerable significance.
8. With the help of multilateral evaluation of constituent parts of social economic potential, their role in the formation of national investment potential is introduced; basic priorities of the development of our country are defined, considering the development of human potential, knowledge and culture as fundamental.

9. Taking into account the fact that main impulses of the development, appearing in culture and undergoing changes during long-term period, influence national mentality and transform social economic system, the role and significance of the combined culture capital as an axial constituent of the strategy are justified.

10. Considering development concepts by W. Rostow within the framework of current social economic conditions, the work exposes the identity of Rostou's forth phase (the phase of high mass consumption) with the last pre-crisis phase where unprecedented growth of consumption was the principal stimulus of development, and the unbalanced development of income and expenses became its consequence and the cause of the crisis. Rostou's last phase (the phase of searching the quality of life, where spiritual, moral, cultural and intellectual human development are highlighted) is identified with the present post-crisis phase, where the task of social development of spiritual priorities - culture, knowledge and human resource – becomes starting for changing the quality of life and progressive development.

11. So, the development of the society, occurring on the basis of economic development and providing diverse qualitative transitions, at last reaches a new phase of searching the quality of life where spiritual cultural and intellectual development of man and the society but not the economic factor is put in the forefront.

12. Considering social economic development as a continuous transformational process as well as admitting that solutions to transformational tasks directly depend on overcoming internal resistance of a transformed object on the one hand and on corresponding corrections in transformational processes on the other hand, the scrutiny of the relationship of rational and irrational gains importance in the scope of social economic processes. Here, it is important not to deny the irrational but to provide dominating influence of the rational.

13. Considering social development as initial for social economic development, marking out of conceptual characteristics of long-term national development assumes great importance, particularly the priority of individual interest over social interest, social consent, and effective cooperation of political and economic systems on the basis of the principles of democracy, legitimacy and transparency.

14. Under conditions of social economic transformations, transition methods and mechanisms obtain particular importance. The role of the concept of national governance, where the principle of “two eye” management in the face of the state and the society is fundamental, becomes of paramount importance. From this point of view, the managerial culture with administrative and intellectual constituents, where the administrative constituent is gradually substituted by the intellectual one, takes on special significance. It is justified that the concept of national governance in Armenia should be social and cultural, based on the national cultural ideological system, where an educated man, with his thinking ability, comes forward as an object of development and simultaneously as an implementator of the presented concept and the continuous development of knowledge is advanced as a motive power.

15. Taking into account the significance of the question of nation's self-organization combined structure, the necessity of structural changes in the form of the following subsystem structures is grounded:

subsystem of cultural and spiritual development, aimed at forming national thinking and self-identification as well as at acknowledging the role of our nation in human civilization;

subsystem of provision of social understanding and society – state cooperation, aimed at involving the society in the process of making administrative decisions and correspondingly at increasing the effectiveness of these processes;

subsystem of social economic strategic development, aimed at detaching strategic and current administrative level.